

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2022
N 2 (57)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaratutyunjournal.com

Հրապարակված է 27.12.2022թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Արթուրի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the Republic of Armenia coordinating the field of functions aimed at confiscation of property of illicit origin, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – PhD in Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyanyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության հետազոտության քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Զհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manç” University, Doctor of Law, Professor

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyán – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Էդուարդ Դազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդեբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskyi – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեև – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Մամվել Արրահամյան

6 ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հիբրիդային ուսուցումը օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը կրթության շարունակականության ապահովման համատեքստում

12 ՆԱՀԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Իրավական ակտի նպատակի կամ օրենսդրի օբյեկտիվ նպատակի բացահայտումը իրավական ակտի մեկնաբանման համատեքստում

20 ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորումները ՀՀ-ում

27 ՌՈՍԵԼԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Օտարերկրյա ռազմական բազայի միջազգային իրավական կարգավիճակի հասկացությունը

31 ՌՈՔԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռեսուրսների գնահատման VRIO ռազմավարական հայեցակարգը՝ որպես ՀՀ բուհերի մրցունակության ապահովման գործիք

40 ԱՆՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Համայնքային ծառայության արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները

48 НАРИНЕ АБЕЛЯН

Право человеческого эмбриона на рождение в свете репродуктивных прав человека

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՍՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում հիբրիդային ուսուցման մոդելի ուսումնասիրությանը, ներկայացվում հիբրիդային ուսուցման առավելությունները: Արված ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենսդրությունում ամրագրել հիբրիդային ուսուցման մոդելը՝ որպես կրթության իրավունքի իրացման, կրթության շարունակականության ապահովման երաշխիք:

Հիբրիդային ուսուցման մոդելի կիրառումը հնարավորություն կընձեռի ֆորս-մաժորային իրավիճակներում սահուն անցում կատարելու հեռավար ուսուցմանը և ապահովելու կրթության շարունակականությունը:

Հիմնաբառեր - կրթություն, ուսուցում, հիբրիդային ուսուցում, հեռավար ուսուցում, կրթության շարունակականության ապահովում, երաշխիք:

Կրթության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, իսկ դրա իրականացումը՝ մարդկանց միջև հավասարության և ազատության հասնելու գործուն միջոց: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին դաշնագիրը հռչակում են յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության ոլորտում կարևորագույն երաշխիք է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը, որում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք»:

Այսօր շատ կարևոր է կրթության իրավունքի ապահովման ոլորտում հավասար հնարավորությունների ստեղծումը, որպեսզի կրթությունը կապի մարդու ընդունակությունների, այլ ոչ թե նյութա-

կան վիճակի հետ: Կրթության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ...» (հոդված 6):

Կարևոր է ընդգծել, որ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրվեց շատ կարևոր իրավադրույթ, այն է՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

Անկախությունից ի վեր ՀՀ-ն ընդունել է մի շարք օրենքներ¹, իրականացրել կազմակերպական մի շարք միջոցառումներ կրթության իրավունքի երաշխավորման, կրթության ոլորտի կարգավորումը նոր պայմաններում ապահովելու ուղղությամբ: Կրթության ոլորտում պետական քաղաքականության խնդիրներն էականորեն փոխվել են: Եթե անկախության առաջին տարիներին գլխավոր խնդիրը տնտեսական ճգնաժամի ու շրջափակման

պայմաններում գոյություն ունեցող կրթական համակարգի պահպանումն էր, հետագայում կրթական համակարգի զարգացման ապահովման խնդիրը, ապա, կորոնավիրուսի (Covid-19) համավարակով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին 2020թ. մարտի 16-ի N 298-Ն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման ընդունումից հետո կրթության ոլորտում պետական քաղաքականության լրջագույն խնդիրներից էր հավասար հնարավորությունների ստեղծմամբ կրթության շարունակականության ապահովումը: Բնականաբար, տվյալ իրադրությունում խնդրի միակ լուծումը հեռավար ձևաչափով ուսուցման կազմակերպումն էր:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանվում են կրթության ձևերը, մասնավորապես. «Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով» (հոդված 12):

«Հեռավար ուսուցում» հասկացությունն ամրագրված է 2004թ. ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ կետում, ըստ որի՝ հեռավար (դիստանցիոն) ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Իսկ ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգի» 1-ին կետով հստակ սահմանվում է. «Հեռավար ուսուցումը կարող են կազմակերպել միայն համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները՝ հիմնական և (կամ) լրացուցիչ մասնագիտական, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրերով»:

Չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2010 թվականից օրենսդրական հիմքեր կային հեռավար կրթության կազմակերպման և իրականացման համար, սակայն արտակարգ դրության հայտարարման պահին հեռավար ուսուցում իրականացնելու թույլտվություն ուներ միայն ՀՀ պետական կառավարման ակադեմիան՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ կրթական ծրագրով²:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն անմիջապես անցում կատարեցին հեռավար ձևաչափով ուսուցման կազմակերպմանը: Թեպետ «Հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն 2005 թվականի մայիսի 25-ի N 692-Ն որոշման 2-րդ հավելվածով հստակ սահմանվում է հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը, այնուամենայնիվ, գրեթե բոլոր բուհերն անցան հեռավար ուսուցման, ինչը մեր կարծիքով անթույլատրելի էր՝ հաշվի առնելով տվյալ բուհերում ուսուցանվող մասնագիտությունների առանձնահատկությունները (բուժական գործ, ստոմատոլոգիա, պարարվեստ, դիզայն, կինոարվեստ, գեղանկարչություն, քանդակագործություն և այլ ոլորտներ):

Բացի այդ, եթե բուհերի պարագայում օրենքով կարգավորվում էր հեռավար ուսուցման իրականացման հետ կապված հարաբերությունները, ապա «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով հեռավար ուսուցման իրականացման օրենսդրական հիմքեր չկային:

Հանրակրթության ոլորտում առաջնահերթ անհրաժեշտ էր օրենսդրական հիմքեր ապահովել հեռավար ուսուցման իրականացման համար: 2020 թվականի մարտի 6-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց հետևյալ բովանդակությամբ 6.1 կետով. «Հեռավար (դիստանցիոն) կրթություն՝ կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով»:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 26.5-րդ կետով, համաձայն որի՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն)

կրթության կազմակերպման կարգը:

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.5-րդ կետը՝ ԿԳՄՍ Նախարարի 2020թ. մայիսի 20-ի N 09-Ն հրամանով հաստատվեց «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը», որի 8-րդ կետով հեռավար ուսուցման իրականացման միջոցով կրթության շարունակականության ապահովման երաշխիքներ սահմանվեցին ոչ միայն արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում (8-րդ կետի 2-րդ ենթակետ), այլ նաև այն դեպքերում՝ եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի քափուր տեղի համալրումը (8-րդ կետի 1-ին ենթակետ); դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում; այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք; այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից; այն անձանց համար, որոնք պետք է մասնակցեն էքստեռն կարգով ավարտական քննություններին՝ հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ ստանալու նպատակով: Սփյուռքում բնակվող, ինչպես նաև Սփյուռքում բնակվող և Հայաստանի Հանրապետություն վերադառնալ ցանկացող ընտանիքների երեխաների համար, ովքեր լրացուցիչ կրթության միջոցով մտադիր են յուրացնել հիմնական ծրագրեր՝ ՀՀ-ում հանրակրթության մեջ ընդգրկվելու համար (8-րդ կետի 3-7-րդ ենթակետեր):

Կորոնավիրուսային ճգնաժամը ստիպեց արժատապես վերանայել դասավանդման մոտեցումները, մտածել «շրջանակից դուրս» և հանդես գալ նորարարական ու պրագմատիկ լուծումներով՝ հեռավար ձևաչափով կրթության շարունակականությունը ապահովելու համար:

Անհրաժեշտ է արձանագրել, որ առցանց միջավայր տեղափոխվելը ոչ միայն հեռավար ուսուցման համար օրենսդրական հիմքեր ապահովելն է, այլև այնպիսի մեխանիզմների, լուծումների ներդրումը, որոնց շնորհիվ սովորողներն ու մանկավարժները անհրաժեշտության դեպքում սահուն կերպով կկիրառեն կրթական տեխնոլոգիաները:

Զնայած Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգի» 15-րդ կետի 4-րդ ենթակետով ՏՀՏ-ը սահմանվում են որպես հանրակրթական ծրագրերի բովանդակության մաս, ընդ որում 33-րդ կետի 2-րդ ենթակետով (գ.) սահմանվում է. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը 2-6-րդ դասարաններում ներկայացվում է թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով, 7-12-րդ դասարաններում՝ կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին և ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայով», սակայն համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամի ընթացքում բացահայտված մարտահրավերները ցույց տվեցին, որ յուրաքանչյուր հիմնգեղորդ սովորող չի կարողանում օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաներից, կամ նրան հասանելի չեն ուսուցման թվային գործիքները և ինտերնետ կապը: Բացի այդ, չկա ուսուցման կազմակերպման միասնական հարթակ և միասնական գործիքակազմ, դասավանդողները չունեն ՏՀՏ-ի կիրառման անհրաժեշտ մակարդակի հմտություններ:

ՏՀՏ կիրառումը ուսուցման գործընթացում ոչ միայն բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, այլ նաև հնարավորություն է տալիս ապահովել կրթության շարունակականությունը, երբ դեմառդեմ շփումն այլևս հնարավոր չէ: Սակայն, ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ և՛ դասավանդողները, և՛ սովորողները լավ ծանոթ լինել տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանց կիրառմանը:

Այսօր աշխարհում մեծանում է ուսումնական գործընթացում ՏՀՏ կիրառմամբ ուսուցման կազմակերպումը, մասնավորապես՝ հիբրիդային (համակցված կամ խառը) ձևաչափով դասերի անցկացման պահանջը:

Հիբրիդային ուսուցումը համեմատաբար «երիտասարդ» եզրույթ է, որն առաջացել է օտարերկրյա հետազոտողների շնորհիվ: Մասնավորապես, Փիթ Շարման, Կուրտիս Բոնկը, Բարնի Բարետտը, Մարտին Օլիվերը նախ փորձել են սահմանել «հիբրիդային ուսուցում» հասկացությունը, իսկ հետո՝

այդ մոդելի գաղափարը իրականացնել գիտական ոլորտում: Սկզբնական շրջանում հիբրիդային ուսուցումը դիտարկում էին որպես ուսուցման մեթոդ, որի հիմքում էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիան է: Այն հիմնականում կիրառվում էր մեծ կոլեկտիվներում, որոնց աշխատողները մասնագիտական վերապատրաստման կարիք ունեին:

Ուսումնական հաստատություններում հիբրիդային ուսուցման մոդելի կիրառման առաջին արդյունքները հայտնվել են Ռենդի Գերիսոնի և Նորման Վոգանի «Blended Learning in Higher Education: Framework, Principles, and Guidelines»⁴ և Կուրտիս Բոնկի և Չարլզ Գրեհեմի «The handbook of blended learning environments: Global perspectives, local designs»⁵ ձեռնարկներում:

«Հիբրիդային ուսուցում» (Blended Learning System) ասելով Կուրտիս Բոնկը և Չարլզ Գրեհեմը հասկանում են ուսուցման այնպիսի համակարգեր, որոնք դեմառդեմ ուսուցման և համակարգչային ուսուցման սինթեզ են⁶:

Այս մոդելը սահմանելու փորձեր են արել նաև ռուս հետազոտողները: Օրինակ՝ Յու. Միշոտան «խառը ուսուցում» ասելով նկատի ունի որպես «խառը դասընթաց», որը «համատեղում է իրական ժամանակում էլեկտրոնային ուսուցումը և դեմառդեմ ուսուցումը»⁷: Ըստ այլ հեղինակների՝ «հիբրիդային ուսուցումը» ավանդական և էլեկտրոնային ուսուցման ձևերի համակցումն է⁸:

Օտարերկրյա հեղինակներ Քրիս Ռիդը, Հարվի Սինգը մատնանշում են այս մոդելի անհերքելի առավելությունները և համոզմունք հայտնում, որ այն ապահովում է ուսուցման արդյունավետությունը, ժամանակի ճիշտ կառավարումը, անհատական մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը⁹:

Վերջին 10-15 տարիների ընթացքում հիբրիդային ուսուցումը ոչ միայն ստացել է զգալի տարածում հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգում, այլև դարձել է ամենահեռանկարային ուղղություններից մեկը, որի հետ շատ փորձագետներ կապում են կրթական համակարգի ապագան 21-րդ դարում:

Այսպես օրինակ. ըստ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի նախագահ Ջոն Յանգի՝ հեռավար ուսուցման և դեմառդեմ ուսուցման համակցումը ժամանակակից կրթության զարգացման ամենամեծ և դեռևս լիովին չընդունված միտում/ուղղությունն է¹⁰: Դեռևս 2003 թ. Ուսուցման և զարգացման ամերիկյան միությունը խառը ուսուցումը դիտարկել է որպես ուսուցման 10 հիմնական տեխնոլոգիաներից մեկը՝ հիմնված գիտելիքահեն տնտեսության վրա¹¹:

Միջկանգնի վիրտուալ համալսարանը (MVU) խրախուսում է դպրոցների և բուհերի ղեկավարներին մշակելու այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք ներառում են նորարարական մոդելներ: Համալսարանը մշակել է հեռավար և հիբրիդային ուսուցման չափանիշների ձեռնարկ՝ օգնելու դպրոցների խորհուրդների անդամներին, վարչական աշխատողներին, ուսուցիչներին, ծնողներին և մյուսներին՝ սովորողների կարիքները բավարարելու գործում¹²:

Ֆինլանդիայում կրթության ոլորտում ազգային ռազմավարական ծրագրերը ներառում են ուսուցման միջոցառումներ և հետազոտական նախագծեր՝ դպրոցներում զարգացնելու ՏՀՏ-ի, էլեկտրոնային ուսուցման, թվային/մեդիա գրագիտության հմտությունները: Տարրական և միջնակարգ դպրոցներում ՏՀՏ-ն դասավանդվում է որպես այլ առարկաների ընդհանուր գործիք կամ որպես գործիք այլ առարկաներից հատուկ առաջադրանքներ կատարելու համար:

ՏՀՏ ուսուցման նպատակների համար ընդունված նորմատիվ ակտերով կարգավորվում են ինչպես տարրական և միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթության մակարդակում համակարգչից, էլեկտրոնային հավելվածներից օգտվելու, տեղեկատվության որոնման և մուլտիմեդիայի օգտագործման կարգը¹³:

Հիբրիդային ուսուցումը, որը ներառում է ինչպես առցանց, այնպես էլ ավանդական կրթության ձևերի տարրեր, կրթության նորագույն ուղղություն է, այն կարելի է համարել պահանջված և արդյունավետ տեխնոլոգիաներից մեկը ինչպես դպրոցներում, այնպես էլ բուհերում:

Հիբրիդային ուսուցման մոդելի հիմնական առավելություններն են.

1. նորարարություն, դասավանդման նոր մոտեցումներ և գործիքներ,
 2. ճկունություն. դասավանդողը կարող է փոփոխել ուսումնասիրվող նյութը և հարմարեցնել սովորողի կրթական մակարդակին,
 3. դասավանդողի ստեղծագործական ազատություն և ավելի շատ տեղեկատվություն փոխանցելու հնարավորություն,
 4. սովորողների ակտիվ մասնակցություն և ինքնուրույնության խթանում,
 5. սովորողների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու հնարավորություն:
- Կատարված ուսումնասիրության հիման վրա, հանգում ենք այն հետևության, որ անհրաժեշտ է՝
1. Հանրակրթության, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական կրթության մասին

օրենսդրությունում ամրագրել հիբրիդային ուսուցման մոդելը՝ որպես կրթության իրավունքի իրացման, կրթության շարունակականության ապահովման իրավական երաշխիք, և, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը՝ սահմանել դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

2. Ներդնել մեկ միասնական հեռավար հարթակ, որը թույլ կտա զուգակցելով առցանց և դեմառդեմ ուսուցման ձևերը (հիբրիդային ուսուցում):

ապահովել ոչ միայն ուսուցման արդյունավետություն, այլ նաև ձեռք բերել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտ մակարդակի հմտություններ, ինչն էլ հնարավորություն կընձեռի ֆորս-մաժորային իրավիճակներում սահուն անցում կատարելու հեռավար ուսուցմանը և ապահովելու կրթության շարունակականությունը:

¹ ՀՀ օրենքը «Կրթության մասին» (ընդունվել է 14.04.1999), ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (ընդունվել է 14.12.2004), ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին» (ընդունվել է 15.11.2005), ՀՀ օրենքը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» (ընդունվել է 25.05.2005), ՀՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (ընդունվել է 08.07.2005), ՀՀ օրենքը «Կրթության պետական տեսչության մասին» (ընդունվել է 15.11.2005), ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին» (ընդունվել է 10.07.2009):

² Հ.Ստեփանյան, Հ.Գրիգորյան: Կրթության իրավունքի երաշխավորման արդի հիմնախնդիրները/ Դպրատուն հասարակական գիտությունների հանդես, 1(11)-2021: էջ 122:

³ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար/առցանց կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ առցանց հարցման ամփոփ արդյունքներ:
<https://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf>

⁴ Garrison D. Randy. Blended Learning in Higher Education: Framework, Principles, and Guidelines / D. Randy Garrison, N. D. Vaughan; 1st edition, 1960.

⁵ Bonk C. J. The handbook of blended learning environments: global perspectives, local designs / C. J. Bonk, C. R. Graham. San Francisco: Jossey-Bass/ Pfeifer, 2006.

⁶ Bonk C. J. The handbook of blended learning environments: global perspectives, local designs / C. J. Bonk, C. R. Graham. San Francisco: Jossey-Bass/ Pfeifer, 2006.

⁷ Мишота И. Ю. Применение «смешанного» обучения (“blended learning”) в образовательном процессе в ВУЗах / И. Ю. Мишота // Сборник трудов Историко-архивного института: рецензируемый сборник научных трудов. М., 2012. Т. 39. С. 453.

⁸ Dede C., Ketelhut D. J., Whitehouse P., Breit L., McCloskey E. M. A Research Agenda for Online Teacher Professional Development // Journal of Teacher Education. 2009. Vol. 60. № 1. P. 8–19.

⁹ Singh H. A white paper: achieving success with blended learning / H. Singh, C. Reed // American society for training and development, 2001.

¹⁰ Young J.R. Hybrid teaching seeks to end the divide between traditional and online instruction. Chronicle Of Higher Education, 2002. Vol. 48, no. 28, pp. 33–34.

¹¹ Rooney J.E. Blending learning opportunities to enhance educational programming and meetings. Association Management, 2003, vol. 55, no. 5, pp. 26–32.

¹² <https://swsu.ru/sbornik-statey/onlayn-i-smeshannoe-obuchenie-v-ssha.php>

¹³ https://ec.europa.eu/information_society/newsroom/image/document/2018-3/finland_country_profile_2F95B00C-C5E5-C4E9-B37C237CD55B0AD0_49435.pdf

Ասմիկ Տեփանյան

Кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

*Необходимость законодательного закрепления гибридного обучения
в контексте обеспечения непрерывности образования*

В статье рассматриваются модели гибридного обучения, представлены преимущества гибридного обучения.

На основе исследования предлагается закрепить модель гибридного образования в законодательстве как об общем образовании, так и о высшем послевузовском образовании, как гарантию реализации права на образование и преемственности образования.

Применение гибридной модели обучения позволит плавно перейти на дистанционное обучение в форс-мажорных ситуациях, обеспечить преемственность образования.

Ключевые слова: образование, обучение, гибридное обучение, дистанционное обучение, обеспечение преемственности образования, гарантия.

Hasmik Stepanyan

PhD of Law, Associate Professor

SUMMARY

*The need for legislative fixation of hybrid learning in the context
of ensuring the continuity of education*

The article refers to the study of the hybrid learning model, and presents the advantages of hybrid learning.

Based on the research, it is proposed to enshrine the hybrid education model in the legislation on both general education and higher postgraduate education, as a guarantee for the realization of the right to education and the continuation of education.

The application of the hybrid learning model will enable smooth transition to distance learning in force majeure situations, to ensure the continuity of education.

Key words: education, training, hybrid learning, distance learning, continuing education, guarantee.

Բնագիրը ներկայացվել է 12.07.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժ. Ջհանգիրյանը

ՆԱՀԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանող

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆՊԱՏԱԿԻ ԿԱՄ ՕՐԵՆՍԴՐԻ ՕՐԵՆՏԱՏԻՎ ՆՊԱՏԱԿԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՄԵԿՆԱԲԱՆՍԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Իրավական ակտի մեկնաբանման հնարքներից մեկը դրա նպատակի բացահայատումն է: Սակայն տեսության մեջ և պրակտիկայում չկա միասնական մոտեցում նպատակի, դրա բնույթի ու բացահայտման եղանակների մասին: Նպատակը երկու տեսակի են բաժանում՝ օրենսդրի սուբյեկտիվ նպատակ և օրենսդրի օբյեկտիվ նպատակ կամ այլ կերպ իրավական ակտի նպատակ: Իրավական ակտերը մեկնաբանելիս արդյո՞ք մեկնաբանողի խնդիրն է բացահայտել օրենսդրի օբյեկտիվ նպատակը, թե սուբյեկտիվ նպատակը կամ էլ երկուսը միասին: Այս աշխատանքի շրջանակներում առավել մանրամասնորեն անդրադառնալու ենք օրենսդրի օբյեկտիվ նպատակի վերաբերյալ հարցադրումներին, խնդիրներին և դրա կիրառելիությանը:

Հիմնաբառեր – իրավական ակտերի մեկնաբանում, օրենսդրի սուբյեկտիվ նպատակ, օրենսդրի օբյեկտիվ նպատակ, իրավական ակտի նպատակ, օրենսդրի նպատակի բացահայտում, իրավունքի նպատակային մեկնաբանում, տեքստուալիզմ:

Իրավունքի տեսությանը հայտնի են իրավական ակտի մեկնաբանման մի շարք եղանակներ ու միջոցներ, որոնք ձևավորվել են հարյուրամյակների ընթացքում: Չնայած մեկնաբանման տեսություններն ունեն էական հակասություններ և տարբերություններ, հայրենական իրավահամակարգում դրանց հիմնական գաղափարների միասնության միջոցով ձևավորվել է իրավական ակտի մեկնաբանման կանոնների խումբ, որն իրավական նորմի տեսքով ամրագրվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում¹ (այսուհետ՝ Օրենք): Օրենքը հստակ սահմանում է, թե ինչպես պետք է մեկնաբանել իրավական ակտերը՝ ի տարբերություն շատ երկրների, որտեղ իրավական ակտերը մեկնաբանվում են, հղում անելով դոկտրինալ աղբյուրներին: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլնի, սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է, հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը, ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Մեկնաբանման կանոնների սահմանումը Օրենքում հետապնդում է մեկ նպատակ՝ առավելագույնս ապահովել իրավական ակտերի ճիշտ մեկնաբանումը և դրանց կիրառումը: ԱՄՆ առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնն արդարացիորեն նշել է, որ կառավարության հաջողությունն ու կայունությունը և դրան ի հետևանք ժողովրդի երջանկությունը մեծապես կախված են օրենքների ճիշտ մեկնաբանումից և կիրառումից²: Սակայն խնդիրն

առնչվող հեղինակները չեն տվել «նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմնի նպատակ» հասկացության բնորոշումը, և պրակտիկայում դատավորների, ինչպես նաև այլ իրավակիրառ մարմինների ու ընդհանրապես իրավական ակտը մեկնաբանողի մոտ հարց է առաջանում, թե ո՞րն է այդ նպատակը, և ինչպե՞ս պետք է այն բացահայտել ու հաշվի առնել նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելիս կամ ընդհանրապես արդյո՞ք ճիշտ է իրավական ակտն ընդունող մարմնի նպատակը հաշվի առնելը: Յուրաքանչյուր իրավական ակտ ունի իր ուրույն նպատակը, սակայն բոլոր իրավական ակտերն էլ ի վերջո հետապնդում են հասարակական հարաբերություններում որոշակի փոփոխություն կատարելու նպատակ: Արդյո՞ք մեկնաբանողի խնդիրն է բացահայտել իրավական ակտի օբյեկտիվ նպատակը, այսինքն այն փոփոխությունը, որը այդպիսի ակտը պետք է ողջամտորեն բերի հասարակական հարաբերություններում, թե այն նպատակը, որը տվյալ ակտն ընդունող մարմինն է ունեցել ակտն ընդունելիս ու նախատեսել, որ հասարակական հարաբերություններում փոփոխություններ լինեն իր նպատականշա՞ծ ձևով: Այս աշխատանքի շրջանակներում առավել մանրամասնորեն անդրադառնալու ենք օրենսդրի օբյեկտիվ նպատակի կամ այլ կերպ իրավական ակտի նպատակի վերաբերյալ հարցադրումներին, խնդիրներին և դրա կիրառելիությանը:

Իրավական ակտերի մեկնաբանումը ուղղակիորեն կապված է ՀՀ Սահմանադրությամբ՝ ամրագրված իշխանությունների բաժանման և հավա-

սարակչոճման սկզբունքի հետ, հետևաբար մեկնաբանման կանոնների օրենսդրական ամրագրումը և իրավական ակտերի մեկնաբանումը պետք է կատարվեն այս սահմանադրական սկզբունքին համահունչ: Դիցուք դատարանում ունենք իրավական վեճ, և դատավորը այն լուծելու համար պետք է մեկնաբանի իրավական ակտի որևէ դրույթ, այսինքն՝ բացահայտի դրա բովանդակությունը, իմաստը, ինչն էլ հնարավորություն կտա կիրառելու այդ դրույթը և լուծելու վեճը: Բայց դատավորը օրենսդիր մարմին չէ, հետևաբար իրավասու չէ օրենքին իր հայեցողությամբ ցանկացած իմաստ տալ: ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն է իրականացնում օրենսդիր իշխանությունը: Եթե ղեկավարվենք այլ տրամաբանությամբ և իրավունքը մեկնաբանողին՝ կոնկրետ այս դեպքում դատավորին, հնարավորություն տանք որոշելու օրենքը, ոչ թե մեկնաբանելու այն, ապա մենք անուղղակիորեն նրան կվերագրենք օրենսդրի գործառույթ, որը, ըստ ՀՀ Սահմանադրության՝ բացառապես մեկ մարմնի է պատկանում:

Դատավորի և ընդհանրապես իրավունքը մեկնաբանողի խնդիրը հասկանալն է, թե օրենքն ինչ է նշանակում և ըստ դրա էլ օրենքը կիրառելը: Այն հանգամանքը, որ իրավական ակտի որևէ դրույթ մեկնաբանելիս հնարավոր չէ շարժվել միայն սեմանտիկ՝ լեզվական, կանոններով ակնհայտ է: Բառերը շատ հաճախ տարիմաստ են լինում և հարկ է լինում որոշել, թե որն է մեկնաբանման հնարավոր տարբերակներից ճիշտը: ԱՄՆ Գերագույն դատարանի նախկին դատավոր Ֆելիքս Ֆրանկֆուրտերը օրենքի իմաստը բացահայտելու խնդիրը համարում էր հետևանք հենց «բառերի բնությանը»: Ըստ նրա՝ բառերը օրենքի իմաստը բացահայտելու համար ոչ ճշգրիտ ուղենիշներ են: Հենց այս տեսանկյունից է առաջանում նպատակը բացահայտելու անհրաժեշտությունը: Այս փաստը ընդունում է նաև նոր տեքստուալիզմի հիմնադիր՝ ԱՄՆ Գերագույն դատարանի նախկին դատավոր Անտոնին Սկալիան՝ Նպատակային մեկնաբանման տեսության կողմնակիցները կարծում են, որ տեքստուալիզմը բացառում է տեքստի նպատակը, բայց դա, կարծում ենք, այդպես չէ: Տեքստուալիստը հաշվի է առնում նպատակը, բայց իր կոնկրետ դրսևորումներով, որոնք կարելի է բխեցնել տեքստի ընթերցումից⁴:

Ըստ իրավական ակտերի նպատակային մեկնաբանման տեսության (այսուհետ՝ Տեսություն) իրավական ակտի նպատակը նորմատիվային կոնցեպտ է: Իրավական ակտը մեկնաբանողը ձևավո-

րում է դրա նպատակը՝ հիմք ընդունելով իրավական ակտն ընդունող մարմնի նպատակի մասին առկա տեղեկությունները (հիմնավորումներ, օրենսդրական գործընթացի վերաբերյալ տեղեկություններ) (սուբյեկտիվ նպատակ) և տվյալ իրավական համակարգի նպատակը (օբյեկտիվ նպատակ, ողջամիտ հեղինակի նպատակ)⁵:

Ահարոն Բարաքի կարծիքով Տեսությունը յուրահատուկ երկխոսություն է օբյեկտիվ և սուբյեկտիվ նպատակների միջև: Մի կողմից մեկնաբանողները ապրում են ներկայում և նրանք գիտակցաբար և ենթագիտակցաբար օրենքը մեկնաբանում են ներկա իրավական համակարգին համապատասխան: Մյուս կողմից, նրանք գնում են հետ՝ անցյալ, հասկանալու տեքստը այնպես, ինչպես այն ստեղծվել և ընկալվել է նախկինում: Նրանք անընդհատ հարաբերվում են ներկայի ու անցյալի միջև: Եվ հաշվի առնելով օրենքն ընդունելիս դրա հեղինակի և ներկա իրավական համակարգի նպատակները, ելնելով օրենքի տեքստից, ձևակերպում են վերջնական նպատակը⁶:

Տարածված կարծիք կա, որ Տեսությունը հիմնված է այն նպատակի բացահայտման վրա, որին հասնելու համար նորմը ստեղծվել է⁷: Ըստ Բարաքի՝ այսպիսի կարծիքը ինքնին ստեղծում է թյուրընկալում նպատակի մասին, այն վերագրելով միայն հեղինակի սուբյեկտիվ նպատակին: Նպատակը նորմատիվային կոնցեպտ է, որն ի վերջո որոշումը է մեկնաբանողը: Դատավորը մեկնաբանելիս պետք է բացահայտի և հաշվի առնի թե սուբյեկտիվ, թե օբյեկտիվ նպատակը: Վերջնական նպատակը ձևավորելիս դատավորն է որոշում, թե որ նպատակին ավելի ծանր կշիռ տա՝ օբյեկտիվին, թե սուբյեկտիվին⁸: Մեկնաբանողի համար կենտրոնական խնդիրը այս երկու նպատակների միջև ներդաշնակությունն ապահովելն է: Իսկ այն դեպքում, երբ հնարավոր չէ ապահովել ներդաշնակությունը, և առկա է հակասություն այդ երկու նպատակների միջև, ապա վերջնական նպատակը որոշելիս էական է, թե մենք ինչ իրավական ակտ ենք մեկնաբանում⁹: Ավստրալիայի Բարձրագույն դատարանը նշել է, որ օրենսդրի նպատակը հորինված է ու գուրկ որևէ օգտակար կիրառելիությունից¹⁰:

Այն փաստը, որ օրենսդրի նպատակը գոյություն ունի, անժխտելի է: Յուրաքանչյուր խոսք և գործողություն օժտված է որոշակի նպատակով, այդ թվում նաև օրենքները՝ որպես օրենսդիր գործառույթի հետևանք, ունեն որոշակի նպատակ: Բացարձակապես հերքել այդ փաստը, հնարավոր չէ, այլ հարց է թե այն ի՞նչ բովանդակությամբ պետք է հաշվի առնել: Եթե անդրադառնանք վե-

րոնշյալ հարցին, ապա կկարողանանք մասնավորել այն միջոցների և եղանակների համակարգը, որոնք կօգնեն բացահայտել օրենսդրի նպատակը: Լիովին հերքել օրենսդրի նպատակի գոյությունը հնարավոր չէ, քանի որ օրենքի գոյությունը արդեն իսկ փաստում է օրենսդրի նպատակի գոյության մասին: Օրենքը տեքստ է, որը գրվել է որևէ անձի կամ անձանց խմբի կողմից: Օրենքի տեքստը գրելիս օգտագործվում են բառեր և կազմվում մախադասություններ, որոնք որոշակի իմաստ են արտահայտում: Օրենքի տեքստը արդեն ինքնին ընդհանուր առմամբ արտահայտում է օրենսդրի նպատակը, քանի որ այդ տեքստը գրողները օրենքի բառերը ընտրել և մախադասությունները կազմել են այնպես, որ դրանք որոշակի իմաստ արտահայտեն, ինչին նրանք նպատակ են ունեցել հասնելու: Հետևաբար, օրենքի տառացի մեկնաբանությունը չի ենթադրում նպատակի անտեսում, ավելին՝ այն օրենսդրի նպատակը բացահայտելու եղանակներից մեկն է, որովհետև, կամա թե ակամա, տառացի մեկնաբանելիս մենք բացահայտում ենք օրենսդրի նպատակը այնքանով, որքանով որ հնարավոր է այն բխեցնել օրենքի տեքստից:

Ինչպես արդեն նշել ենք, բառերի բնույթը այնպիսին է, որ դրանք հետագայում շատ հաճախ տարրակալումների պատճառ են դառնում, ու բացի այդ հայտնի փաստ է, որ հնարավոր չէ գրել օրենքներ, որոնք ի սկզբանե կլինեն կատարյալ: Դեռևս 1877 թվականին Անգլիայի պատմության նշանավոր դատավորներից Լորդ Բլեքբորնը նշել է, որ բոլոր դեպքերում նպատակը պետք է բացահայտել՝ ելնելով բառերից, սակայն լեզվի անկատարության պատճառով անհար է հասկանալ, թե որն է եղել նպատակը առանց ավելի հեռուն գնալու ու բացահայտելու, թե ինչ հանգամանքներում են հենց այդ բառերը օգտագործվել, ի՞նչ է մտքին ունեցել օրենքի տեքստի հեղինակը, քանի որ բառերը ունեն տարբեր իմաստներ՝ կախված օրենքը մշակելու պահին առկա հանգամանքներից. դատարանների դերը օրինաստեղծ գործառնությամբ զբաղվելը չէ, այլ օրենսդրի նպատակը բացահայտելն է¹¹: Այդ պատճառով էլ առաջանում են հակասություններ օրենքի դրույթների միջև, օրենքի բացեր, որոնք մեկնաբանման պրոցեսում լուծման կարիք ունեն: Իրավունքի նորմը մեկնաբանելու և այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ավելի ընդգրկուն բացահայտել օրենսդրի նպատակը:

Փորձը ցույց է տալիս, որ իրավունքի նորմը մեկնաբանողները ոչ թե փորձում են բացահայտել օրենսդրի սուբյեկտիվ նպատակը, այլ փնտրում են որոշակի օբյեկտիվ նպատակ, որը հեղինակը ող-

ջամտորեն կունենար՝ օրենքի տեքստը գրելիս: Ըստ Սկալիայի՝ այդպիսի մոտեցումը անհամատեղելի է ժողովրդավարական արժեքների հետ, քանի որ այսպիսի մոտեցումը առաջարկում է բացահայտել ոչ թե այն նպատակը, որն ունեցել է օրենսդիրը, այլ այն նպատակը, որն օրենսդիրը ենթադրաբար պետք է ունենար: Ըստ նրա, եթե մենք շարժվենք այն տրամաբանությամբ, որ դատական մեկնաբանման խնդիրը օրենսդրի որևէ կերպ չարտահայտված, ողջամիտ նպատակի բացահայտումն է, ապա պրակտիկայում կունենաք շատ մեծ վտանգ, երբ դատավորները օրենսդրի ողջամիտ նպատակի քողի տակ օրենքը կմեկնաբանեն իրենց նպատակներին ու ցանկություններին համապատասխան¹²: Բարաքի կարծիքով օբյեկտիվ նպատակը ողջամիտ հեղինակի նպատակն է, իսկ ավելի ընդհանուր ձևակերպմամբ՝ համակարգի նպատակը: Ըստ նրա օբյեկտիվ նպատակը կարելի է առանձնացնել երկու մակարդակում: Միայն այդ իրավական ակտին բնորոշ օբյեկտիվ նպատակ կախված այդ ակտի բնույթից, և համակարգի օբյեկտիվ նպատակը, որը բնորոշ է բոլոր իրավական ակտերին՝ ըստ էության սրանք իրավական պետության սկզբունքներն են: Բարաքը առանձնացնում է օբյեկտիվ նպատակը արստրակցիայի չորս մակարդակներում: Առաջին՝ արստրակցիայի ամենացածր մակարդակում մեկնաբանողը փորձում է «երևակայական վերակառուցման» միջոցով իրեն պատկերացնել օրենքի հեղինակի դերում և հասկանալ այն պատմական իրողությունները, որոնք եղել են օրենքը գրելու պահին ու ելնելով դրանից՝ փորձում է սեփական երևակայության միջոցով վերհանել արստրակտ նպատակը: Սա կարևոր է չփոթել սուբյեկտիվ նպատակի բացահայտման հետ: Երկրորդ մակարդակում մեկնաբանողը կոնկրետ հեղինակին փոխարինում է ողջամիտ հեղինակով: Մեկնաբանողը ձևավորում է կատարյալ հեղինակի հիփոթետիկ նպատակը, որը միջանկյալ տեղ է զբաղեցնում իրավական համակարգի սկզբունքների, արժեքների և օրենքի իրական հեղինակի նպատակների միջև: Երրորդ մակարդակում մեկնաբանողը ելնում է տեքստի տեսակից և բնույթից: Այս մակարդակում մեկնաբանողը ոչ թե փորձում է բացահայտել, թե ինչ ողջամիտ նպատակ կունենար հեղինակը օրենքը գրելիս, այլ սովորաբար ինչ նպատակով են օժտված լինում նմանատիպ օրենքները: Չորրորդ՝ արստրակցիայի բարձրագույն մակարդակում, մեկնաբանողը ելնում է իրավական համակարգի հիմնարար սկզբունքներից¹³:

Մեկնաբանողը, որքան էլ որ փորձի օգտագործել տարբեր եղանակներ և մեթոդներ օբյեկտիվ

նպատակը բացահայտելու համար, ի վերջո այն բացահայտելու հիմնական աղբյուրը լինելու է նրա երևակայությունը: Հետևաբար, իրավունքը մեկնաբանողները ողջամիտ և օբյեկտիվ կհամարեն այն նպատակը, որն իրենք են ձևավորում, ինչը հակասում է օբյեկտիվ նպատակի գաղափարին: Միանշանակ է, որ իրավական ակտերն ունեն օբյեկտիվ նպատակ, սակայն այն բացահայտելու միջոցները սուբյեկտիվ են: Իմ կարծիքով, ողջամիտ հեղինակի մոդելը քողարկում է մեկնաբանողի կողմից սեփական նպատակներն ու ցանկությունները, քանի որ մեկնաբանողը կամա թե ակամա իրեն է համարում ողջամիտ հեղինակ:

Սկզբից գտնում է, որ այսպիսի մեկնաբանումը նշանակում է դատարանի ցանկությունը օրենսդրի չարտահայտված նպատակ համարել¹⁴: Պատահական չէ, որ օբյեկտիվ նպատակի կոնցեպտը, որը նաև կոչվում է իրավական ակտի նպատակ, պաշտպանվում է հիմնականում դատավորների կողմից: Անգլիայի և Ուելսի վերաքննիչ դատարանի դատավոր Ջոն Լոուսը նշել է, որ պետք է հրաժարվել օրենսդրի նպատակից և աշխատել իրավական ակտի նպատակի հետ, որը բխում է հենց այդ ակտից¹⁵: Այսպիսով, դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները իրենց կայացրած դատական ակտերում գրեթե չեն օգտագործում «օրենսդրի նպատակ» եզրույթը, այնինչ՝ օրենքի պահանջն է իրավական ակտերը մեկնաբանելիս հաշվի առնել նաև օրենսդրի նպատակը: Այս դեպքում անհասկանալի է, թե իրավունքը ամենահաճախ մեկնաբանող մարմինները՝ դատարանները, ինչպես են մեկնաբանում նորմերը դատական ակտերում՝ օրենսդրի նպատակի մասին չնշելով: Դատական ակտերում հղում¹⁶ է արվում «օրենսդրի պահանջ» հասկացությանը, և դրա տակ վերաբնակվում է օրենքի նորմը, ինչը չի համընկնում օրենսդրի նպատակ հասկացության հետ, ավելին այն օգտագործելը իրավաբանորեն սխալ է, քանի որ օրենսդիրը չի կարող պահանջ ունենալ: Պահանջը օրենքինն է, որը ձևավորում է օրենսդիրը իր նպատակներին համապատասխան: Իսկ այն եզակի դեպքերում¹⁷, երբ վկայակոչվում է օրենսդրի նպատակը, չկա որևէ վերլուծություն օրենսդրի նպատակի ու դրա բացահայտման մասին, այլ արևտրակտ կերպով նշվում է, թե տվյալ դեպքում որն է օրենսդրի նպատակը: Ավելին՝ Սահմանադրական դատարանը որոշման¹⁸ մեջ առանց բացահայտելու օրենսդրի նպատակը կարծիք է հայտնել դրա իրավաչափության վերաբերյալ: Մեկ այլ որոշմամբ¹⁹ Սահմանադրական դատարանը «այլևս իրավաբանական ուժ չունեցող

միջամտող վարչական ակտը կամ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ճանաչման հայցի շրջանակներում ոչ իրավաչափ ճանաչելը որոշակի նախադրյալների առկայությամբ պայմանավորելը» համարել է Սահմանադրության տեսանկյունից արդարացված օրենսդրի նպատակ, առանց նշելու, թե ինչի հիման վրա ու ինչպես է բացահայտել օրենսդրի նպատակը ու եկել այդպիսի եզրահանգման: Սրանք վառ ապացույցն են, որ դատարանները իրավունքը մեկնաբանելիս, ելնում են ոչ թե օրենսդրի իրական նպատակից, այլ իրենց ձևավորած նպատակից, որը վերագրում են օրենսդրին:

Ի պաշտպանություն օբյեկտիվ նպատակի, այդ մոտեցման կողմնակիցները բերում են նաև հետևյալ փաստարկը, այն է՝ ինչպես պետք է մեկնաբանել նորմը, երբ օրենսդրի սուբյեկտիվ նպատակը բացակայում է: Ըստ Գրեյի՝ բարդ գործերում, երբ բացակայում է օրենսդրի նպատակը դատավորներն են իրականացնում օրենսդրի գործառույթ ու լրացնում օրենքի բացը²⁰: Ահարոն Բարաքը գտնում է, որ իրավական ակտերը չեն կարող ընդհանրապես չունենալ նպատակ²¹: Ըստ նրա այն դեպքերում, երբ հայտնի չէ հեղինակի նպատակը, օրինակ՝ հանրաքվեների ժամանակ հնարավոր չէ իմանալ բոլոր քվերակողների նպատակը, պետք է առաջնորդվել օբյեկտիվ նպատակով, քանի որ այն միշտ առկա է²²: Սա ուղղակիորեն ենթադրում է գնալ ոչ թե նպատակի բացահայտման, այլ դրա կառուցման ճանապարհով: Թվում է, թե օբյեկտիվ նպատակի կառուցման ու ամրագրման ճանապարհով գնալը լավագույնս ապահովում է իրավական ակտերի արդարացի մեկնաբանումն ու կիրառումը, բայց սա միայն առաջին հայացքից: Holy Trinity v. United States²³ գործը վառ օրինակ է դատարանի կողմից սեփական նպատակները օրենսդրի նպատակի տակ քողարկելու, նպատակի հիմնավորմամբ տեքստի շրջանակներից դուրս գալու և ըստ այդմ՝ օրենքը մեկնաբանելու համար: Սուրբ Երրորդություն եկեղեցին, որը գտնվում է Նյու Յորքում, պայմանագիր է կնքել մի անգլիացու հետ, որպեսզի նա տեղափոխվի ԱՄՆ և դառնա եկեղեցու ռեկտորն ու հոգևոր հովիվը: Միացյալ Նահանգները պնդել է, որ այս պայմանագիրը խախտում է դաշնային օրենքը, որն արգելում է օժանդակել կամ խրախուսել օտարեկրացու միգրացիան ԱՄՆ պայմանագրի կամ համաձայնագրի հիման վրա ցանկացած ծառայություն կամ աշխատանք կատարելու համար: Նյու Յորքի դատարանը եկեղեցուն պատասխանատվության է ենթարկել, սակայն ԱՄՆ Գերագույն դատարանը բե-

կանել է այդ որոշումը: Գերագույն դատարանը մեկնաբանման բազմաթիվ եղանակների օգտագործմամբ պատճառաբանել է, որ այս օրենքը նպատակաուղղված է եղել արգելել միայն «մեխանիկական» աշխատանքը, ինչի մասին վկայում է օրենքով նախատեսված բացառությունը դերասանների, արտիստների, դասախոսների, երգիչների համար²⁴: Այսինքն դատարանը անուղղակիորեն սահմանել է ինչ-որ թվացյալ նպատակ, այն վերագրել օրենսդրին ու անուղղակիորեն եկել այն եզրահանգմանը, որ օրենսդիրը, բացառություն սահմանելով դերասանների, արտիստների, դասախոսների, երգիչների համար, նպատակ է ունեցել արգելել միայն «մեխանիկական» աշխատանքը, հետևաբար այդ բացառությունների ցանկը սահմանափակ չէ, ուղղակի օրենսդիրը սխալվել է կամ չի կարողացել ամբողջական ցանկ սահմանել: Սկսած արդարացիորեն նշում է, որ օրենսդիրը կարող է, և՛ խելամիտ օրենքներ ընդունել, և՛ անտրամաբանական օրենքներ, բայց դատարանները չեն, որ պետք է վերջինների ուղղմամբ զբաղվեն²⁵: Իսկ անգլիացի նշանավոր փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը նշել է, որ դատավորները պետք է հիշեն, որ իրենց պարտականությունն օրենքը մեկնաբանելն է, ոչ թե այն ընդունելը կամ շնորհելը²⁶:

Նույնիսկ եթե հաշվի չառնենք օբյեկտիվ նպատակի վերոնշյալ խնդիրները, այն միշտ չէ, որ հուսալի գործիք է իրավական ակտը ճիշտ մեկնաբանելու համար: Իրավունքի նորմը մեկնաբանելիս իրավական սկզբունքները հաճախ մրցակցում են: Այս դեպքում օբյեկտիվ նպատակի տեսանկյունից անհասկանալի է, թե որ սկզբունքին պետք է առաջնահերթություն տալ: Ամենավառ օրինակներից մեկը պատվի, արժանապատվության պաշտպանության և կարծիքի ազատ արահայտման սկզբունքների հակասությունն է: Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր պաշտպանության սահմանները, որոնք հստակ չեն: Հետևաբար ինչպե՞ս պետք է դատավորը որոշի, թե կոնկրետ նորմի դեպքում, որ սկզբունքին առավելություն տա: Բարաքը այս դեպքում առաջարկում է հարցը լուծել՝ որոշելով, թե որ սկզբունքը այդ դեպքում ունի ավելի մեծ «կշիռ»²⁷: Իսրայելի Գերագույն դատարանի որոշումներից մեկում նա նշել է, որ սկզբունքների կշիռն ու հավասարակշռությունը փոխաբերական հասկացություններ են: Ոչ բոլոր իրավական սկզբունքներն ունեն հավասար նշանակություն հասարակության համար, և եթե սահմանադրությունը դրա մասին չի հուշում, դատարանը պետք է որոշի տարբեր սկզբունքների հասարակական կարևորությունը²⁸: Այսպիսի մոտեցումը նորից վերադառնում է այն

սկզբնականին, ինչից սկսել էինք օբյեկտիվ նպատակի քննադատությունը, մասնավորապես՝ նորմը մեկնաբանվում է դատավորի նպատակներին ու ցանկություններին համապատասխան:

Այսպիսով իրավական ակտի նպատակ կամ այլ կերպ օրենսդրի օբյեկտիվ նպատակ կոնցեպտը գոյություն ունի և որոշ չափով կիրառելի է իրավական ակտերը մեկնաբանելիս, սակայն դրա կիրառության սահմանները պետք է հնարավորինս հստակ լինեն: Նախ առաջին հերթին պետք է հստակեցնել հենց օբյեկտիվ նպատակ եզրույթը: Ըստ էության խոսքը ոչ այնքան օբյեկտիվ նպատակի մասին է, որքան օրենսդրի ողջամիտ նպատակի մասին: Այս կոնցեպտի կիրառելիության սահմանները տարբերվում են կախված տվյալ երկրի իրավական համակարգից: Այս հայեցակետի կիրառելիության սահմանները ուղղակիորեն կապված են իշխանությունների բաժանման սկզբունքի հետ, մասնավորապես՝ դատական և օրենսդիր իշխանության կապի ու հարաբերակցության հետ: Այդ հարաբերակցության բնույթը որոշելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին՝ ինչպիսի՞ն է պետության սահմանադրական կառուցվածքը, դատական իշխանության բնույթը, ինչպե՞ս է դատական իշխանությունը հարաբերակցվում օրենսդիր իշխանության հետ, դատավորները օրենսդրի մարմնի ենթակա գործակալներն են, թե նրա կրտսեր գործընկերները, և ի վերջո՝ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է ենթադրում օրենսդիր իշխանություն: Ինչպե՞ս պետք է մեկնաբանող վերաբերվի օրենսդիր իշխանությանը, որպես խնդիրը լուծող, թե լուծման համար ուղենիշ տվող մարմին²⁹:

Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասում նշված օրենսդրի նպատակ եզրույթը անկասկած վերաբերում է օրենսդրի սուբյեկտիվ նպատակին, ու այսպիսի եզրահանգմանը գալիս ենք հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում, և տառացի մեկնաբանումը հստակորեն բացահայտում է նորմի իմաստը: Այլ հնարքներ օգտագործելու անհրաժեշտությունը բացակայում է այս դեպքում: Հետևաբար, Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդրի նպատակ հաշվի առնելը միանշանակ վերաբերում է օրենսդրի սուբյեկտիվ նպատակի բացահայտմանը: Օբյեկտիվ նպատակը բացահայտելու անհրաժեշտություն հիմնականում կարող է առաջանալ այն դեպքում, երբ օրենսդրի նպատակը կոնկրետ տվյալ հարցի վերաբերյալ բացակայում է կամ հնարավոր չէ բացահայտել այն: Մեր կարծիքով օբյեկտիվ նպատակը պետք է հաշվի առնել միայն Բարաքի նշած³⁰ արբտրակցիայի երրորդ և չորրորդ մակարդակներում, որով-

հետև և՛ տարբեր իրավական ակտերի բնույթը, և՛ իրավական համակարգի սկզբունքները ունեն սահմանադրական ամրագրում: Օբյեկտիվ նպատակը չի կարող բացահայտվել աբստրակցիայի՝ մյուս երկու ավելի ցածր մակարդակներում, որովհետև ողջամիտ հեղինակի սկզբունքը խիստ սուբյեկտիվ է: Երբ դատարանը իրավունքի նորմը մեկնաբանելիս փորձում է բացահայտել ողջամիտ հեղինակի նպատակը, ապա մտնում է սեփական երևակայության դաշտ ու այսպիսով օբյեկտիվ նպատակը բացահայտելու փոխարեն առաջ է բերում մի նոր սուբյեկտիվ նպատակ, ինչը հակասում է մի շարք հիմնարար իրավական սկզբունքների՝ այդ թվում իրավունքի կանխատեսելիությանը: Օրենքները պետք է գրվեն ու մեկնաբանվեն այնպես, որ քաղաքացիները կարողանան հասկանալ դրանց բովանդակությունը և կանխատեսել, թե դրանք ինչպես կկիրառվեն³¹: Եթե դատավորները, օբյեկտիվ նպատակը բացահայտելով, օրենքին վերագրեն ցանկացած նպատակ, ապա այդ դեպքում անհնար կլինի կանխատեսել օրենքի կիրառելության բնույթը: Մեր նշած մոտեցումը բխում է նաև Օրենքի 41-րդ հոդվածից, որտեղ օբյեկտիվ նպատակի մասին կարգավորում նախատեսված չէ, սակայն ի թիվս այլնի, 41-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է նաև մեկնաբանելիս ելնել այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Վերոնշյալը հենց ենթադրում է օբյեկտիվ նպատակի բացահայտում մեր նախանշած սահմաններով: Հակառակ դեպքում, եթե անտեսվի օրենսդրի սուբյեկտիվ նպատակը, ու օրենքները մեկնաբանվեն ողջամիտ հեղինակի սկզբունքով, ապա օրենսդրական ամբողջ գործընթացը և օրենսդիր մարմնի օրինաստեղծ գործառույթը կկրի ձևական բնույթ: Ժոզեֆ Ռ-ազը նշում է³², որ անձին կամ մարմնին վերապահել օրինաստեղծ գործառույթ նշանակում է նրան տալ օրենքներ ընդունելու իրավասություն: Իմաստ չունի որևէ մարմնի օժտել օրինաստեղծ գործառույթով, քանի դեռ չի ենթադրվում, որ օրենքը կիրառվում է այնպես, ինչպես այդ մարմնին է նախատեսել: Իրավունքի մեկնաբանման միջոցների ու եղանակների ընտրությունը և դրանց հարաբերակցությունը ուղղակիորեն կախված է իշխանության երեք ճյուղերի միջև եղած կապի բնույթից, մասնավորապես՝ օրենսդիր ու դատական իշխանության միջև եղած կապից: Բեկոնը պատկերավոր կերպով ներկա-

յացրել է այդ կապը, մասնավորապես՝ նշելով, որ Մոդոմոն իմաստունի թագը երկու կողմից առյուծներ էին պահում, թող դատավորները լինեն այդ առյուծները, բայց առյուծներ միայն թագի տակ, որպեսզի ոչ մի կերպ չխանգարեն ու չհակադրվեն սուվերենին³³ այս դեպքում մեր կարծիքով օրենսդիրն: Այսպիսով իրավունքը մեկնաբանելիս պետք է ելնել այն կանխավարկածից, որ օրենսդրի իրական, սուբյեկտիվ նպատակն է գերակա և պետք է մեկնաբանելիս հաշվի առնել հենց սուբյեկտիվ նպատակը, որի մասին կխոսենք հաջորդ աշխատանքում: Իսկ օբյեկտիվ նպատակը պետք է հաշվի առնել միայն մեր նախանշած սահմաններով ու այն դեպքերում, երբ բացակայում է նպատակը, այն հնարավոր չէ բացահայտել կամ էլ անհրաժեշտ է գնահատական տալ օրենսդրի սուբյեկտիվ նպատակի իրավաչափության վերաբերյալ: Օբյեկտիվ նպատակի բացահայտման անհրաժեշտությունը հիմնականում առաջանալու է Սահմանադրական դատարանի կողմից գործերի քննության ընթացքում, այն էլ մեծամասամբ սահմանադրությունը մեկնաբանելու դեպքում, քանի որ այս դեպքում իրավական ակտն ընդունվում ու փոփոխվում է հանրաքվեի միջոցով, իսկ հանրաքվեի դեպքում սուբյեկտիվ նպատակը բացակայում է:

- ¹ Ընդունվել է 21.03.1998թ. (ՀՀՊՏ 2018.03.28/23(1381)):
- ² Տե՛ս, George Washington (1790), in Maxims of Washington, Mount Vernon, Va., The Mount Vernon ladies' association (1942), էջ 128:
- ³ Ընդունվել է 06.12.2015թ. (ՀՀՊՏ 2015.12.21/Հաստուկ թողարկում Հոդ. 1118):
- ⁴ Տե՛ս, Antonin Scalia & Bryan A. Garner, Reading Law: The Interpretation of Legal Texts — 1st ed., Published by Thomson/West 2012, էջ 38:
- ⁵ Տե՛ս, Aharon Barak, Purposive interpretation in law, Princeton university press (2005), էջ 110;
- ⁶ Տե՛ս, նույն տեղում, էջ 112:
- ⁷ Տե՛ս, G. Gottlieb, The Logic of Choice, NY: Macmillan (1968), էջ 105:
- ⁸ Տե՛ս, Aharon Barak, նույն աշխ., էջ 112:
- ⁹ Տե՛ս, նույն տեղում, էջ 118:
- ¹⁰ Տե՛ս, Lacey v Attorney-General (Qld) (2011) 242 CLR 573, [43] (French CJ, Gummow, Hayne, Crennan, Kiefel and Bell JJ) :
- ¹¹ Տե՛ս, River Wear Commissioners v Adamson (1877) 2 App Cas 743, 763-764.
- ¹² Տե՛ս, A. Scalia, A Matter of Interpretation: Federal Courts and the Law (1997), էջ 18 :
- ¹³ Տե՛ս, Aharon Barak, նույն աշխ., էջեր 150-152:
- ¹⁴ Տե՛ս, A. Scalia, supra note 12, էջ 21:
- ¹⁵ Տե՛ս, Lord Sales Justice of the UK Supreme Court, In Defence of Legislative Intention, 2019, (A version of this lecture is published in (2019) 48 Australian Bar Review 6), էջ 1:
- ¹⁶ Տե՛ս, թիվ ՍԴ-0126/02/14 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.04.2015թ. որոշումը, տե՛ս նաև, թիվ ԼԴ-4/0236/02/17 քաղաքացիական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2018թ. վճիռը:
- ¹⁷ Տե՛ս, թիվ ՍԴ-2/0835/02/21 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2021թ. վճիռը, տե՛ս նաև , թիվ ՎԴ-4/792/05/20 վարչական գործով վերաքննիչ վարչական դատարանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին 08.12.2020թ. որոշումը:
- ¹⁸ Տե՛ս, Սահմանադրական դատարանի ՍԴ-Ո-1448, 19 մարտի 2019թ. որոշումը:
- ¹⁹ Տե՛ս, Սահմանադրական դատարանի ՍԴ-Ո-1497, 17 դեկտեմբերի 2019թ. որոշումը:
- ²⁰ Տե՛ս, John Chipman Gray, The Nature and Sources of Law (1909), էջ 165:
- ²¹ Տե՛ս, Aharon Barak, նույն աշխ., էջ 119:
- ²² Տե՛ս, նույն տեղում, էջ 119:
- ²³ Տե՛ս, Holy Trinity v. United States 143 U.S. 457 (1892) :
- ²⁴ Տե՛ս, A. Scalia, supra note 12, էջեր 18-19:
- ²⁵ Տե՛ս, նույն տեղում, էջ 20:
- ²⁶ Տե՛ս, Francis Bacon, Of Judicature, The Essays or Counsels Civil and Moral:
- ²⁷ Տե՛ս, Aharon Barak, նույն աշխ., էջ 178:
- ²⁸ Տե՛ս, H.C. 14/86, Laor v. Council for Review of Films and Plays, 41(1) P.D. 421, 434:
- ²⁹ Տե՛ս, John F. Manning, Without The Pretense of Legislative Intent, 130 Harv. L. Rev. 2397, 2017, էջ 2413:
- ³⁰ Տե՛ս, Aharon Barak, նույն աշխ., էջ 150-152:
- ³¹ Տե՛ս, Lord Sales Justice of the UK Supreme Court, նույն աշխ., էջ 12:
- ³² Տե՛ս, J Raz, “Intention in Interpretation” in The Autonomy of Law: Essays on Legal Positivism (1996), էջ 258:
- ³³ Տե՛ս, Francis Bacon, Of Judicature, նույն աշխ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. George Washington (1790), in Maxims of Washington, Mount Vernon, Va., The Mount Vernon ladies' association (1942), էջ 128:
2. Antonin Scalia & Bryan A. Garner, Reading Law: The Interpretation of Legal Texts - 1st ed., Published by Thomson/West 2012, էջ 38:
3. Aharon Barak, Purposive interpretation in law, Princeton university press (2005):
4. G. Gottlieb, The Logic of Choice, NY: Macmillan (1968), էջ 105:
5. Lacey v Attorney-General (Qld) (2011) 242 CLR 573, [43] (French CJ, Gummow, Hayne, Crennan, Kiefel and Bell JJ):
6. River Wear Commissioners v Adamson (1877) 2 App Cas 743, 763-764:
7. A. Scalia, A Matter of Interpretation: Federal Courts and the Law (1997):
8. Lord Sales Justice of the UK Supreme Court, In Defence of Legislative Intention, 2019, (A version of this lecture is published in (2019) 48 Australian Bar Review 6):
9. Թիվ ՍԴ-0126/02/14 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.04.2015թ. որոշումը:
10. Թիվ ԼԴ-4/0236/02/17 քաղաքացիական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2018թ. վճիռը:
11. Թիվ ՍԴ-2/0835/02/21 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի

- 21.10.2021թ. վճիռը:
 12. Թիվ ՎԴ/4792/05/20 վարչական գործով վերաքննիչ վարչական դատարանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին 08.12.2020թ. որոշումը:
 13. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1448, 19 մարտի 2019թ. որոշումը:
 14. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1497, 17 դեկտեմբերի 2019թ. որոշումը:
 15. John Chipman Gray, The Nature and Sources of Law (1909), էջ 165:
 16. Holy Trinity v. United States 143 U.S. 457 (1892):
 17. Francis Bacon, Of Judicature, The Essays or Counsels Civil and Moral:
 18. H.C. 14/86, Laor v. Council for Review of Films and Plays, 41(1) P.D. 421, 434:
 19. John F. Manning, Without The Pretense of Legislative Intent, 130 Harv. L. Rev. 2397, 2017, էջ 2413:
 20. J Raz, "Intention in Interpretation" in The Autonomy of Law: Essays on Legal Positivism (1996), էջ 258:

Նապետ Տուկիասյան

Студент четвертого курса бакалавриата
юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Раскрытие цели правового акта или объективного законодательного намерения в контексте толкования закона

Один из методов толкования закона заключается в раскрытии цели. Однако в теории и на практике нет единого подхода к цели, ее природе и методам раскрытия. Цель делится на два вида: субъективная намерения законодателя и объективная намерения законодателя или, другими словами, цель правового акта. Является ли задача толкователя, при толковании правовых актов, выявить объективную цель законодательства или субъективную цель, или и то, и другое вместе? В рамках данной работы более подробно остановимся на вопросах, проблемах и применимости объективной намерения законодателя.

Ключевые слова - толкование правовых актов, субъективная намерения законодателя, объективная намерения законодателя, цель правового акта, выявление цели законодателя, целевое толкование права, текстуализм.

Nahapet Sukiasyan

Specialist of the Office of Deputy Prime Minister RA H. Matevosyan,
Fourth year undergraduate student at the
Law Faculty of Yerevan State University

SUMMARY

Disclosure of the purpose of the law or the objective legislative intent in the context of statutory interpretation

One of the methods of statutory interpretation is to reveal its purpose. However, in theory and in practice there is no single approach to the purpose, its nature and methods of disclosure. The purpose is divided into two types: the subjective legislative intent and the objective legislative intent or, in other words, the purpose of the statute. When interpreting legal acts, is the task of the interpreter to take account the objective legislative intent or the subjective legislative intent, or both? As part of this work, we will discuss in more detail the issues, problems and applicability of the objective legislative intent.

Key words – statutory interpretation, subjective legislative intent, objective legislative intent, the purpose of a statute, disclosure of the legislative intent, purposive interpretation of statutes, textualism.

Բնագիրը ներկայացվել է 11.11.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գանիեյանը

ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի հանրային կապերի
և տեղեկատվության կենտրոնի ավագ մասնագետ,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության բաժնի մագիստրանտ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Քաղաքական կուսակցությունների գործունեության, կուսակցական համակարգերի ֆունկցիոնալության, առանձնահատկությունների և այլ հարակից հիմնախնդիրների ուսումնասիրության տեսանկյունից կարևորագույն հանգամանք են պետությունում առկա այսօրոտային սահմանադրաիրավական կարգավորումները, որոնք ստեղծված են երաշխավորելու կուսակցությունների ազատ գործունեությունը, ինչպես նաև ընտրական գործընթացներին վերջիններիս անխափան և պարբերական մասնակցությունը: Այս առումով կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավանորմերի ուսումնասիրությունը ունի թե՛ տեսական, թե՛ կիրառական նշանակություն: Հոդվածում փորձել ենք վեր հանել ՀՀ անկախացումից ի վեր կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավանորմերի առանձնահատկությունների, ներկայացնել դրանց զարգացման էվոլյուցիան:

Հիմնադրաբեր- ՀՀ, քաղաքական կուսակցություններ, իրավանորմեր, սահմանադրաիրավական կարգավորումներ, ազատ մրցակցային ընտրություններ, համամասնական և մեծամասնական ընտրական համակարգ, քաղաքական մշակույթ:

ԽՍՀՄ փլուզումը իրավաքաղաքական շրջադարձային հետևանքներ ունեցավ նորանկախ բոլոր հանրապետությունների ներքին կյանքում: Վերջիններիս մեծ մասում՝ այդ թվում նաև Հայաստանում, կոմունիստական կուսակցության յոթամասունամյա մենիշխանությանը փոխարինելու եկան նոր ձևավորված կամ նախկինում գլխավորապես ընդհատակում գործած քաղաքական ու հասարակական միավորումները, որոնք էլ հետագայում հիմք հանդիսացան քաղաքական կուսակցությունների և բազմակուսակցական համակարգի ձևավորման համար: Հոդվածում խոսել ենք Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության տարիներին կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավական նորմերի, քաղաքական իրողությունների հետ դրանց օրինաչափությունների և բազմակուսակցական համակարգի իրավական հիմքերի մասին: Այսպես, բազմակուսակցական համակարգի համար բարենպաստ հիմքերի ստեղծման տեսանկյունից առաջին իրավական քայլը եղավ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որով ամրագրում էր արդեն իսկ փաստացիորեն առկա բազմակուսակցական համակարգը Հայաստանում [1, էջ 267-268]: Կուսակցությունների գործունեությունը կարգավորող առաջին իրավական ակտը, սակայն, ընդունված է համարել 1991 թվականի

փետրվարի 26-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված, Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքը, որը արդարացիորեն համարվում է ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի ստեղծումն ազդարարող առաջին իրավական փաստաթուղթը: Օրենքը բավականին հակիրճ էր և բաղկացած էր ընդամենը ութ հոդվածներից [7]: Օրենքի առաջին հոդվածը սահմանում էր հասարակական-քաղաքական կազմակերպությունը՝ որպես կամավոր հիմունքներով միավորված Հայաստանի Հանրապետության ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում, որը ունի ծրագիր ու կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին: Հասարակական-քաղաքական կազմակերպությունների այս սահմանումը բավականին լայն էր և ներկայացուցչական, և հնարավորություն տվեց Հայաստանում գործունեություն ծավալող բազմաթիվ կազմակերպությունների ընդգրկվել այս սահմանման հռչակած շրջանակի մեջ: Երրորդ հոդվածով ամրագրվում է հասարակական-քաղաքական կազմակերպությունների իրավահավասարությունը, նրանց գործունեության իրականացման անխոչընդոտ բնույթը, ինչպես նաև վերջիններիս գործունեու-

թյան հիմնական սկզբունքները: Հոդվածը հստակ սահմանում է նաև գործունեության այն տեսակները, որոնք արգելված են ՀՀ-ում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների համար: Արտերկրից ֆինանսական և այլ օժանդակություն ստանալու արգելքի մասին դրույթի ամրագրումը օրենքում հանդիպեց հայ ավանդական կուսակցությունների՝ հատկապես ՀՅԴ-ի դիմադրությանը: Բանն այն է, որ սովետական ժամանակահատվածում վերջիններիս գործունեության արգելքի պայմաններում այդ կուսակցությունները զարգացել և ֆինանսական կապիտալ էին կուտակել արտերկրում, և կազմակերպական և ֆինանսական այդ ռեսուրսի բացառումը մեծ խնդիրներ կառաջացներ վերջիններիս համար: Չնայած սրան՝ դրույթը ամեն դեպքում ներառվեց օրենքում՝ ազգային անվտանգության և կուսակցական դաշտի կայունության և այլ պետություններից կամ հասարակություններից նրանց անկախության հրամայականով պայմանավորված: Այսպիսով, կարելի է փաստել, որ հասարակական-քաղաքական կուսակցությունների մասին 1991-ի օրենքը, որպես այդպիսին, պատմական և աննախադեպ իրողություն էր կոմունիստական կուսակցության յոթանասունամյա մենիշխանությունից, բազմակարծության և քաղաքական դաշտում առողջ մրցակցության բացակայությունից հետո: Այն կարևոր իրավական հիմք ծառայեց նորանկախ պետության քաղաքական կուսակցությունների՝ քաղաքական կյանքին ակտիվ մասնակցության և պետության ժողովրդավարական զարգացման տեսանկյունից: Հենց այս օրենքի հիման վրա հետագայում ձևավորվեցին կուսակցական դաշտը կանոնակարգող հաջորդ իրավանորմերը: Օրենքը, այնուամենայնիվ, հակիրճ էր և ամբողջապես չէր կարգավորում գործունեության այն լայն դաշտը, որ իրականացնում են կուսակցությունները: Այս առումով հարկ է հատկապես նկատել, որ օրենքում անդրադարձ չկար կուսակցությունների մասնակցությանը քաղաքական կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկին՝ ընտրություններին: Ընտրություններին հատուկ անդրադարձ չկատարելը կարող էր պայմանավորված լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Առաջին. այդ տարիներին տեղի էր ունենում ոչ թե պետական կարգի և համապատասխան իրավանորմերի կերպափոխում կամ տրանսֆորմացիա, այլ գրոյից ստեղծվում էր նորանկախ պետության իրավակարգավորումների համակարգը, ինչը բնական է դարձնում այն, որ անկախության առաջին տարիներին գրված օրենքների մեջ կան բազմաթիվ թերություններ: Հա-

ջորդ կարևոր հանգամանքն էլ թերևս այն է, որ սովետական տարիներին Հայաստանում տեղի ունեցող համապետական, թեկուզև ձևական և դեկլարատիվ, բայցևայնպես իրավականորեն ամրագրված միակ ընտրությունները երկրի օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի ընտրություններն էին, որոնք տեղի էին ունենում մեծամասնական, ոչ կուսակցական ընտրակարգով: Այս համատեքստում կուսակցությունների՝ որպես ընտրություններին մասնակցություն ունեցող կարևորագույն դերակատարների ընկալումը այդ շրջանում թերևս վերջնականորեն ձևակերպված չէր ոչ միայն հասարակական խոսույթում, այլև քաղաքական էլիտայի առաջնահերթություններում: Հայաստանում բազմակուսակցության զարգացման համար կարևորագույն դեր ունեցած իրավական հաջորդ իրադարձությունը 1995-ին առաջին սահմանադրության ընդունումն էր, որը ավելի հիմնարար իրավաքաղաքական փաստաթուղթ էր, և ավելի համապարփակ ձևով էր անդրադառնում կուսակցությունների գործունեության, ընտրություններին վերջիններիս մասնակցության և այլ հարցերին: Սահմանադրության ընդունումը, հետագայում դրա հիման վրա ընտրական առանձին օրենսդրության և կուսակցությունների մասին նոր՝ 2002թ. ընդունված օրենքի առկայությունը մեծ նշանակություն ունեցան քաղաքական կուսակցությունների համար: Ընտրական օրենսդրության՝ որպես առանձին իրավանորմի ընդունումը, որը տեղի ունեցավ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցված եղանակով, կանխորոշեց կուսակցական համակարգի գործունեության մի նոր մակարդակ: Բազմակուսակցական համակարգի կայացվածությունը թևակոխեց մի նոր փուլ, քանզի անկախ պետականության պատմության մեջ առաջին անգամ ընտրությունների գործընթացին, մասնավորապես՝ խորհրդարանական ընտրություններին կուսակցությունների մասնակցության հարցը ստանում էր իրավական ամրագրում: Այսպես, կուսակցություններին հնարավորություն էր տրվում մասնակցություն ունենալու օրենսդիր և գործադիր իշխանության ձևավորման գործընթացին: ՀՀ ԱԺ ընտրությունները անցկացվում էին ոչ միայն մեծամասնական, այլև համամասնական ընտրակարգով, և բոլոր այն կուսակցությունները, որոնք ընտրություններում կկարողանային հաղթահարել հինգ տոկոսի անցողիկ շեմը, կունենային իրենց հավաքած տոկոսներին համապատասխան պատգամավորական տեղեր խորհրդարանում: Ընտրական գործընթացների շուրջ հասարակության ոչ միանշանակ վերաբերմունքը, կուսակցությունների մասին 1991-

ի օրենքի անկատար, ոչ լիարժեք և ժամանակի պահանջներին անհամապատասխան լինելու հանգամանքը (ինչի մասին խոսվեց վերևում), ինչպես նաև մի շարք արտաքին քաղաքական գործոններ (օր.՝ ՀՀ անդամակցությունը Եվրախորհրդին) անհրաժեշտություն առաջացրին կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունման [1, էջ 272]: 2002թ. հուլիսի 3-ին ՀՀ Ազգային Ժողովը ընդունեց Հայաստանի Հանրապետության օրենքը «Քաղաքական կուսակցությունների մասին» [6]: Այս օրենքը որակապես էականորեն տարբերվում էր նախորդ՝ 1991-թ. օրենքից: Նախորդի ութ հոդվածի փոխարեն նոր օրենքը ուներ 33 հոդվածներ, ուստի ավելի համապարփակ և ամբողջական ձևով էր կարգավորում կուսակցությունների գործունեությունը ՀՀ-ում: Օրենքով՝ կուսակցությունների բարձրագույն մարմին է հռչակվում նրա ժողովը (համաժողով, համագումար, վեհաժողով և այլն), որին էլ վերապահվում է ներկուսակցական քննարկումներում վերջին խոսքի իրավունքը: Այս դրույթը թեև իրական նախապայմաններ էր ստեղծում կուսակցություններում ներքին ժողովրդավարության սկզբունքի պահպանման համար, ինչը իր հերթին նպաստում է կուսակցությունների ներսում առողջ մրցակցության ապահովմանը և այդ առողջ մթնոլորտի՝ դեպի ներքաղաքական դաշտ կերպափոխմանը, սակայն իրականության մեջ մենք տեսնում ենք, որ շատ հաճախ կուսակցություններում բոլոր կարևորագույն որոշումները կայացվում են կուսակցական էլիտայի կողմից՝ հաշվի չառնելով շարքային կուսակցականների մոտեցումները: Հետաքրքրական է կուսակցությունների իրավունքներին և պարտականություններին անդրադարձը, որին նվիրված է մեկ ամբողջ գլուխ (հոդված 20-25): Այս տեսանկյունից հատկապես կարևոր է կուսակցությունների բացառիկ իրավունքների մասին 21-րդ հոդվածը, որը, ըստ էության, հստակ ամրագրում է կուսակցությունների՝ որպես պետության նախագահի, ԱԺ պատգամավորի և ՏԻՄ մարմիններում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեցող միակ հասարակական միավորման բացառիկ դերը՝ պետության քաղաքական կյանքին, հատկապես՝ ընտրություններին մասնակցության տեսանկյունից: Պետության կողմից կուսակցություններին ուղիղ ֆինանսական աջակցության դրույթը առաջին անգամ էր հիշատակվում ՀՀ սահմանադրաիրական կարգավորումներում և իր բնույթով աննախադեպ էր: Այս փորձը ակտիվորեն կիրառվում է զարգացած արևմտաեվրոպական երկրներում, և միտված է հնարավորին չափ զերծ պահելու կուսակցությունները զանազան ստվերային կամ ընդհատա-

կում գործող խմբերի ֆինանսական ազդեցության դաշտից: Սակայն ոչ բոլոր կուսակցություններն են, որ ըստ այս կարգավորման, օգտվում են պետական աջակցությունից: Այս դեպքում ևս, ինչպես Ազգային Ժողովում ներկայացված լինելու դեպքում, սահմանվում է որոշակի նվազագույն շեմ: Այս կարգավորումը մի կողմից թույլ է տալիս, որ ֆինանսական աջակցություն ստանան քիչ թե շատ ազդեցիկ և կայուն ընտրազանգված ունեցող կուսակցությունները, մյուս կողմից, սակայն, զրկում է փոքր կուսակցություններին պետական աջակցություն ստանալու և այդպիսով ֆինանսական կայունություն և անկախություն ձեռք բերելու հնարավորությունից: Թեև օրենքի վերաբերյալ տեսակետները միանշանակ չէին, և դրա տարբեր դրույթների մասով կային նաև քննադատական մոտեցումներ [1, էջ 274-76], սակայն կուսակցությունների մասին այս օրենքը, ի համեմատություն իր իրավանախորդ օրենքի, վստահաբար մեկ քայլ առաջ էր Հայաստանում բազմակուսակցական համակարգի կայացման, ինչպես նաև ընտրական գործընթացներին կուսակցությունների մասնակցության իրավական ամրագրումների տեսանկյունից: Կուսակցությունների գործունեությունը, ընտրություններին և հատկապես խորհրդարանական ընտրություններին վերջիններիս մասնակցությունը կարգավորող հաջորդ և դեռևս գործող իրավակարգավորումը 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի նախագիծն էր: Ոլորտի իրավակարգավորումների մեջ Սահմանադրական օրենք եզրի կիրառումն ընդգծում է օրենքի առավել հիմնարար և օրգանական բնույթը պետության իրավաքաղաքական համակարգում: Սահմանադրական օրենքները ՀՀ-ում յոթն են՝ ՀՀ ԱԺ կանոնակարգ օրենքը, ՄԴ մասին օրենքը, ընտրական և դատական օրենսգրքերը, հանրաքվեի, ՄԻՊ-ի մասին օրենքները և կուսակցությունների մասին օրենքը [4, հոդված 103, կետ 2]: Սահմանադրական օրենքի առանձնահատկությունը և կարևորությունը նաև այն է, որ ի տարբերություն այսպես կոչված «սովորական» օրենքների՝ վերջինիս ընդունման համար անհրաժեշտ է ԱԺ պատգամավորիների ձայների ոչ թե պարզ, այլ որակյալ մեծամասնությունը (տվյալ դեպքում՝ երեք հինգերորդ) և խորհրդարանական մեծամասնությունը, որպես կանոն, չի կարող միանձնյա ընդունել սույն օրենքները և այս դեպքում ծագում է խորհրդարանական այլ ուժերի հետ խորհրդակցությունների միջոցով կոնսենսուսի հասնելու անհրաժեշտությունը: Կուսակցությունների մասին օրենքին, ինչպես նաև ընտրա-

կան օրենսգրքին նման բարձր կարգավիճակ տալը պայմանավորված էր գլխավորապես այն հանգամանքով, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի համաժողովրդական հանրաքվեով ընդունված նոր Սահմանադրության նախագծում, ի թիվս այլ փոփոխությունների, ՀՀ-ն կիսանախագահական կառավարման համակարգից անցում է կատարում խորհրդարանական կառավարման համակարգի: Պետության քաղաքական համակարգում առանցքային քաղաքական ինստիտուտը դառնում է երկրի խորհրդարանը՝ Ազգային ժողովը: Հենց ԱԺ ընտրություններն են (չհաշված համաժողովրդական հանրաքվեները), որ դառնում են երկրում պարբերաբար անցկացվող միակ համապետական ընտրությունները՝ դրանով իսկ դառնալով քաղաքական կյանքին մասնակցության կարևորագույն և յուրահատուկ ստուգատեսը քաղաքական կուսակցությունների համար: Այս փոփոխությունը գուցորդվում է նաև Ընտրական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների հետ, որոնցով վերացվում է մեծամասնական ընտրակարգը, և ԱԺ ընտրություններին մասնակցության մոնոպոլ իրավունքը վերապահվում է բացառապես քաղաքական կուսակցություններին և դաշինքներին: Հենց վերջիններիս է վերապահվում նաև ՀՀ երեք խոշոր բնակավայրերի՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիներում թեկնածուների ցուցակներ առաջադրելու իրավունքը: 2016թ. օրենքը բաղկացած է 36 հոդվածներից [5] (նախորդից երեքով ավելի): Ի համեմատություն նախորդ օրենքի՝ բարդացվում է տարածքային ստորաբաժանումների առկայության պահանջը. ըստ այդմ՝ կուսակցությունը գրանցման պահին պետք է ունենա տարածքային ստորաբաժանումներ Երևան քաղաքում՝ առնվազն երեք ստորաբաժանում կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում: Հատկապես կարևոր և հետաքրքրական է օրենքի չորրորդ գլուխը (20-24րդ հոդվածներ), որը վերաբերում է կուսակցությունների իրավունքներին, պարտականություններին և գույքի ձևավորման աղբյուրներին: Օրենքի 20-րդ հոդվածը հստակ սահմանում է Հայաստանում կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների բացառիկ իրավունքները. այն է՝ «Կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները բացառիկ իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորի, ինչպես նաև Երևան, Գյում-

րի և Վանաձոր քաղաքների ավագանու անդամի թեկնածուներ»: Օրենքի 21-րդ հոդվածով կուսակցությունները իրավունք են ստանում մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը: Օրենքով սահմանվում են կուսակցությունների պարտավորությունները՝ պահպանել ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները, յուրաքանչյուր տարի ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.azdarar.am>, հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները պարտավոր են նաև սահմանված ժամկետում ԿԸՀ ներկայացնել կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր: Օրենքի 26-րդ հոդվածը, իր հերթին, սահմանում է պետության կողմից կուսակցություններին տրամադրվող պետական ֆինանսավորման կարգը: Ըստ այդմ՝ պետական բյուջեից միջոցներ հատկացվում են այն կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երեք տոկոսը: Այս կարգավորումը փաստորեն կրկնում է 2002թ. օրենքում եղած դրույթը, ինչը, ինչպես նշել ենք նախորդիվ, ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Օրենքի 27, 28 և 30-րդ հոդվածները տեղավորվում են կուսակցությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքի մեջ (հոդված 4) և ամրագրում են կուսակցությունների կողմից պետությանը ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և դրանց աուդիտի կարգը: Ըստ այս հոդվածների՝ կուսակցությունները պետք է պարբերաբար ներկայացնեն իրենց ֆինանսական և գույքային դրությանը վերաբերող տվյալներ՝ եկամուտներից սկսած մինչև ծախսեր: Մեր խորին համոզմամբ, այս կարգավորումը նպաստում է կուսակցությունների գործունեության թափանցիկությանը և թույլ է տալիս, որ կուսակցությունները իրենց ֆինանսատնտեսական կարգավիճակի մասին հանրությանը հաշվետու լինելու միջոցով նաև խուսափեն հնարավոր սովետային կազմակերպությունների ֆինանսական, և այդպիսով նաև քաղաքական ազդեցությանը ենթարկվելուց, ինչը, իր հերթին, մեծ ազդեցություն կունենա քաղաքական դաշտի առողջացման վրա: Կուսակ-

ցությունների միջազգային գործունեությունը կարգավորող 29-րդ հոդվածը իր բնույթով նորություն էր: Ըստ դրա՝ կուսակցություններին իրավունք է վերապահվում կապեր հաստատելու և պահպանելու օտարերկրյա պետությունների քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, կնքելու համագործակցության մասին համաձայնագրեր, անդամակցելու միջազգային միություններին և իրականացնելու այլ միջոցառումներ, որոնք չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին և օրենքներին: Ինտեգրացիոն և գլոբալիզացիոն գործընթացների արդի տեմպերի և մասշտաբայնության ընդլայնման համատեքստում անխուսափելի է դառնում մման իրավանորմի առկայությունը, քանի որ ժամանակակից աշխարհում արտաքին քաղաքականությունը դարձել է ոչ միայն պետությունների և կառավարական կազմակերպությունների, այլև ոչ կառավարական և անդրազգային ու անդրպետական կազմակերպությունների, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների գործունեության ոլորտը, ուստի ոլորտի կանոնակարգումը բխում է առաջին հերթին հենց պետության շահերից: Օրենքի 31-35-րդ հոդվածները վերաբերում են կուսակցությունների գործունեության կասեցման, լուծարման, արգելման և վերակազմակերպման հարցերին: Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ՝ սույն օրենքով սահմանված կարգով: Կուսակցությունների գործունեության արգելման կամ կասեցման հարցով ՀՀ ՍԴ կարող են դիմել ՀՀ Ազգային Ժողովը և ՀՀ կառավարությունը (հոդված 31): Հոդված 32-ով կուսակցությունների գործունեության կասեցման հիմք է հանդիսանում տվյալ կուսակցության՝ օրենքի կոպիտ խախտում թույլ տալու հանգամանքը: Կասեցման հիմք կարող է ծառայել նաև այն, որ կուսակցությունը ինքնուրույն, կուսակցությունների դաշինքի կամ այլ կուսակցության ընտրական ցուցակի կազմում երկու անգամ անընդմեջ չի մասնակցում Ազգային ժողովի կամ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին: Այս դրույթով ևս մեկ անգամ ամրագրվում է ընտրությունների առանցքային դերը՝ կուսակցությունների գործունեության մեջ: Կասեցված կարգավիճակում կուսակցություններին արգելվում է ծավալել օրենքով նախատեսված գործունեություն, բացառությամբ կասեցման հիմքերի վերացմանն ուղղված գործունեության: Կուսակցությունների արգելման հիմքերը տրվում են ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասում, ինչպես

նաև սույն օրենքի 33-րդ հոդվածում: Ըստ այդմ՝ արգելման ենթակա է այն կուսակցությունների գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով: ՍԴ որոշմամբ կուսակցության գործունեության արգելքի դեպքում տվյալ կուսակցության առաջադրմամբ ընտրված ԱԺ պատգամավորի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու անդամի լիազորությունները չեն դադարեցվում: Ըստ Հոդված 34-ի՝ կուսակցությունը կարող է կուսակցության համագումարի ընդունված որոշմամբ վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել կամ առանձնանալ) այլ կուսակցության: Կուսակցությունների լուծարումը տեղի է ունենում վերջինիս համագումարում մման որոշման ընդունման (ինքնալուծարում) կամ ՀՀ ՍԴ կողմից կուսակցության գործունեությունը արգելելու որոշման հիման վրա (հոդված 35): Օրենքի վերաբերյալ կային և՛ դրական, և՛ բացասական կարծիքներ: Օրենքի հիմնական զեկուցող, արդարադատության նախարար Արփիմե Հովհաննիսյանը ի թիվս այլ առավելությունների նշում էր կուսակցությունների գրանցման պահանջների մեղմացման և դաշտի կանոնների պարզեցման հանգամանքը [2]: Օրենքի երկրորդ ընթերցմամբ քննարկման փուլում հայաստանյան մի շարք հասարակական կազմակերպություններ հանդես եկան օրենքը քննադատող մոտեցումներով՝ պնդելով, որ օրենքը առկա տեսքով չի ապահովում հավասար մրցակցություն և ներկուսակցական ժողովրդավարություն [3]:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ-ում կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավանորմների զարգացման էվոլյուցիան, կարող ենք եզրակացնել, որ կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի շարունակական կայացվածությանը զուգահեռ ոչ պակաս կարևոր հանգամանք է նաև այդ նորմերի արդյունավետ գործառնությունը ապահովող քայլերի հետևողական իրականացումը, ինչը թույլ կտա ՀՀ-ում զարգացնել բազմակուսակցական համակարգը՝ կուսակցություններին իսկապես տալով քաղաքական կյանքին և ընտրություններին մասնակցող առանցքային սուբյեկտների կարգավիճակ:

¹ Ընտրական օրենսգրքում տվյալ ժամանակահատվածում՝ մինչև փոփոխությունը, տարածքային ցուցակների առկայությունը այս առումով շփոթ էր առաջացնում, թե ՀՀ-ում գործում է խառը ընտրակարգ, սակայն ՀՀ-ում գործող ընտրակարգը իր էությունից համամասնական է, քանզի անհատ թեկնածուները չունեն ԱԺ ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու իրավունք: Այս առումով տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգրքը, 25.05.2016, ՀՕ-54-Ն, հոդված 83:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գարիկ Քեռյան, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր. 2002թ.:
2. Խոփրիդարանն սկսել է քննարկել «Կուսակցությունների մասին» նոր օրենքի նախագիծը, հասանելի է 30.03. 2021, <https://www.azatutyun.am/a/28144353.html>:
3. «ՀԿ-ները քննադատում են «Կուսակցությունների մասին» օրենքի նախագիծը», հասանելի է 30.03. 2021. <https://www.azatutyun.am/a/28150117.html>:
4. ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ.:
5. ՀՀ կուսակցությունների մասին սահմանադրական օրենքը, Երևան, 16.12.2016, ՀՕ-224-Ն, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110534>
6. ՀՀ օրենքը կուսակցությունների մասին, Երևան, 03.07.2002, ՀՕ-410-Ն, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75487>:
7. ՀՀ օրենքը հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին, Երևան, 26.02.1991, Ն-0266-I, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=78>:

Нвер Костаян

Старший специалист центра по связям с общественностью
и информации аппарата премьер-министра РА
Магистрант кафедры политологии факультета международных
отношений Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Правовое регулирование деятельности политических партий в РА

С точки зрения изучения деятельности политических партий, функциональности партийных систем, особенностей и других сопутствующих вопросов важнейшим обстоятельством является наличие в государстве конституционно-правовых норм в этой сфере, которые созданы для обеспечения свободного функционирования партий, а также их непрерывного и периодического участия в избирательных процессах. В этом смысле изучение правовых норм, регулирующих деятельность партий, имеет как теоретическое, так и практическое значение. В статье мы попытались осветить особенности правовых норм, регулирующих деятельность партий с момента обретения независимости РА, представить эволюцию их развития.

Ключевые слова: РА, политические партии, правовые нормы, конституционные нормы, свободные конкурентные выборы, пропорциональная и мажоритарная избирательная система, политическая культура.

Nver Kostanyan

Senior Specialist of the Center for Public Relations and Information
of the Office of the Prime Minister of the Republic of Armenia
Master student, Department of Political Science, Faculty
of International Relations, Yerevan State University

SUMMARY

Legal regulation of the activity of political parties in the RA

From the point of view of studying the activities of political parties, the functionality of party systems, features and other related issues, the most important circumstance is the presence in the state of constitutional and legal norms in this area, which are created to ensure the free functioning of parties, as well as their continuous and periodic participation in electoral processes. In this sense, the study of the legal norms governing the activities of parties has both theoretical and practical significance. In the article, we tried to highlight the features of the legal norms governing the activities of parties since the independence of the Republic of Armenia, to present the evolution of their development.

Key words: *RA, political parties, legal norms, constitutional norms, free competitive elections, proportional and majoritarian electoral system, political culture.*

Բնագիրը ներկայացվել է 12.10.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Քեռյանը

ՌՈՍԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
եվրոպական և միջազգային իրավունքի
ամբիոնի հայցորդ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արտասահմանում տեղակայված օտարերկրյա ռազմական բազաների իրավական կարգավիճակը առավել համապարփակ պատկերացնելու և առաջացող իրավական հիմախնդիրների համար խորքային լուծումներ գտնելու նպատակով ամենից առաջ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում սուրբյեկտի իրավական կարգավիճակը: Սույն ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվում ներկայացնելու «իրավական կարգավիճակ» եզրույթի բովանդակությունը, օտարերկրյա ռազմական բազաների իրավական կարգավիճակի բնույթը և այն ձևավորող պայմանները:

Հիմնաբառեր- Իրավական կարգավիճակ, օտարերկրյա ռազմական բազա, հյուրընկալող պետություն, ուղարկող պետություն, ռազմական բազայի անձնակազմ:

Իրավագիտության մեջ «իրավական կարգավիճակ» հայեցակարգին առնչվող հիմնահարցերը բավականին լայնորեն ուսումնասիրվել են, և թեմայի վերաբերյալ գոյություն ունեն մեծաթիվ աշխատություններ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ դեռևս չկա իրավական կարգավիճակ հասկացության ձևակերպման և բովանդակության վերաբերյալ համընդհանուր ճանաչում ունեցող կարծիք:

«Իրավական կարգավիճակ» եզրույթը սովորաբար օգտագործվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է բնորոշել որոշակի իրավական հարաբերություններում այս կամ այն սուբյեկտի զբաղեցրած կարգավիճակը, օրինակ՝ որևէ պետական մարմնի, կազմակերպության, ձեռնարկության, պատգամավորի, պաշտոնատար անձի և այլն¹:

Այս հարցում խնդիրներից մեկն այն է, որ տեսաբանների ուսումնասիրություններում հակասություն է նկատվում որոշակի եզրույթների բովանդակության մեկնաբանության առնչությամբ: Մասնավորապես, որոշ տեսաբաններ² առանձնացնում են «իրավական կարգավիճակ» և «իրավական ստատուս» եզրույթները միմյանցից՝ պնդելով, որ առաջինն ավելի լայն հասկացությունն է, քան երկրորդը: Տեսաբանների մյուս մասը նշված երկու եզրույթները դիտարկում են համարժեքորեն³:

«Ստատուս» եզրույթը լատիներենից թարգմանաբար նշանակում է որևէ մեկի կամ ինչ-որ բանի կարգավիճակ, իրավիճակ⁴: Այս դեպքում խոսքը գնում է իրավական կարգավիճակի մասին: Ուստի, պաշտպանելով տեսաբանների երկրորդ խմբի մոտեցումը, կարծում ենք, որ վերը նշված եզրույթները միանգամայն համարժեք են և կարող են փոխարինել միմյանց: Ամեն դեպքում օրենսդրական դաշ-

տում, իրավական պրակտիկայում և մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում որևէ տարանջատում չի նկատվում նշված հասկացությունների միջև⁵:

Ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում պրոֆեսոր Վոևոդինի առաջարկած հետևյալ սահմանումը՝

«այս կամ այն սուբյեկտի (պետական մարմնի, իրավաբանական կամ ֆիզիկական անձի) իրավական կարգավիճակը (ստատուսը) իրենից ներկայացնում է վերջինիս տեղը հասարակությունում և պետությունում որոշող բարդ և բազմաբովանդակ իրավական ինստիտուտ, որի բաղադրիչներն են համարվում նշված սուբյեկտի հիմնական իրավունքները, ազատությունները, պարտականությունները, երաշխիքները, պատասխանատվությունը, քաղաքացիությունը (ֆիզիկական անձանց համար)⁶, այդ սուբյեկտի ընդհանուր իրավունակությունը»:

Գիտության մեջ ամենակարճ ձևով իրավական ստատուսը կարելի է բնորոշել որպես հասարակությունում անձի իրավաբանորեն ամրագրված կարգավիճակ⁷:

Սույն ուսումնասիրության շրջանակներում մեր խնդիրն է հանդիսանում օտարերկրյա ռազմական բազաների միջազգային իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով խնդրո առարկա իրավահարաբերություններում ընդգրկված սուբյեկտների բնույթը և իրավական աղբյուրները, որոնցով կարգավորվում են օտարերկրյա ռազմական բազաների տեղակայման հետ կապված հիմնահարցերը, պետք է ընդգծել, որ վերջիններիս իրավական կարգավիճակը կրում է նախևառաջ միջազգային-իրա-

վական բնույթ: Առավել մասնավորեցնելով՝ նշենք, որ արտասահմանում օտարերկրյա ռազմական բազաների տեղակայումը կարգավորվում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով, միջազգային ունիվերսալ փաստաթղթերով, երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերով, ինչպես նաև ռազմական բազայի պետության և հյուրընկալող պետության ազգային օրենսդրությամբ:

Համադրելով վերը նշված փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ արտասահմանում օտարերկրյա ռազմական բազաների և վերջիններիս անձնակազմի իրավական կարգավիճակը, լինելով միջազգային իրավական ինստիտուտ, սահմանվում է իրավական նորմերի բարդ համակարգի միջոցով, որը կազմված է տարբեր բաղադրիչներից, մասնավորապես՝ տարաբնույթ միջազգային իրավական փաստաթղթերից, ուղարկող և հյուրընկալող պետությունների ազգային ներպետական օրենսդրությունից:

Ինչպես արդեն մեր կողմից նշվել է վերևում, յուրաքանչյուր սուբյեկտի իրավական կարգավիճակը բնորոշում է վերջինիս տեղը հասարակական հարաբերություններում, միայն թե իրավական ամրագրմամբ: Ուստի, օտարերկրյա ռազմական բազաների միջազգային իրավական կարգավիճակի բովանդակությունը առավել համապարփակ հասկանալու համար անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ վերջինիս ունեցած տեղը և իրավական կապերը ինչպես հյուրընկալող պետությունում, այնպես էլ ուղարկող պետությունում: Պետք է ընդգծել նաև, որ ռազմական բազայի միջազգային իրավական կարգավիճակը մեծապես կախված է իր իրավական բնույթից:

Միջազգային իրավունքի հայտնի տեսաբան, Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Օպպենհայմը, անդրադառնալով խնդրո առարկա հիմնահարցին, նշել է, որ զինված ուժերը համարվում են իրենց պետության մարմիններ, քանի որ վերջիններս ստեղծվում են պետության անկախությունը, հեղինակությունը և անվտանգությունն ապահովելու համար: Ընդդրում, որևէ նշանակություն չունի զինված ուժերը գտնվում են իրենց պետության տարածքում, թե պետության սահմաններից դուրս: Վերջիններս համարվում են իրենց պետության մարմիններ անգամ օտարերկրյա պետության տարածքում՝ պայմանով, որ իրականացնում են պետական ծառայություն և ոչ թե անձնական նպատակներով են գտնվում տվյալ պետության տարածքում⁸:

Այսինքն՝ օտարերկրյա ռազմական բազաները

իրավական կարգավիճակով ուղարկող պետության մարմիններ են, ինչով էլ պայմանավորվում են հյուրընկալող պետությունում նրանց վերաբերյալ իրավական կարգավորումների առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ռազմական բազայի անձնակազմի անդամների իրավական կարգավիճակին, ապա առաջին հերթին պետք է տարանջատել ռազմական անձնակազմին քաղաքացիական անձնակազմից՝ հիմնվելով ռազմական ծառայության առանձնահատկությունների վրա:

Հաշվի առնելով, որ ռազմական անձնակազմի անդամները նույնպես իրենց պետության լիիրավ քաղաքացիներ են, միայն թե համազգեստով, ուժեր պետք է օժտված լինեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով՝ նախատեսված նույն հիմնարար ազատություններով ու իրենց իրավունքների և արժանապատվության նույն պաշտպանության մեխանիզմներով, ինչպես ցանկացած այլ քաղաքացի⁹, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ վերջիններս արտասահմանյան պետության տարածքում կհամարվեն օտարերկրացիներ՝ օժտված օտարերկրացիների համար միջազգային իրավունքով նախատեսված պաշտպանության բոլոր մեխանիզմներով:

Միջազգային իրավունքի նորմերի համաձայն¹¹ օտարերկրացի է համարվում յուրաքանչյուր անձ, ով այն պետության քաղաքացին չէ, որի տարածքում գտնվում է: Ընդդրում, հիմնվելով մի շարք հեղինակների մեկնաբանությունների վրա¹² պայմանականորեն կարելի է առանձնացնել օտարերկրացիների երկու խումբ՝ «սովորական օտարերկրացիներ» և օտարերկրացիներ, ովքեր ունեն որոշակի արտոնություններ և անձեռնմխելիություններ:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ օտարերկրյա ռազմական բազաների տեղակայման դեպքում կնքվող ուժերի կարգավիճակի մասին պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիության չափանիշը չի ընդգրկվում այն նախապայմանների մեջ, որոնք անհրաժեշտ են ռազմական անձնակազմի անդամ համարվելու համար՝ չենք կարող բացառել իրավիճակները, երբ օտարերկրյա ռազմական բազայի ռազմական անձնակազմի անդամ կարող է լինել նաև հյուրընկալող պետության քաղաքացի համարվող անձը:

Ըստ այդմ, մեր գնահատմամբ, օտարերկրյա պետության տարածքում ռազմական անձնակազմի անդամների իրավական կարգավիճակի մասին խոսելիս առաջնային պետք է համարել ոչ թե այս

կամ այն պետության քաղաքացին լինելու փաստը, այլ օտարերկրյա ռազմական բազայի ռազմական անձնակազմի անդամությունից բխող կարգավիճակը:

Իհարկե, նշվածը վերաբերելի չէ այն իրավունքներին ու պարտականություններին, որոնք ծագում են անձնական գործառնությունների տիրույթում, քանի որ ռազմական բազային հյուրընկալող պետության տարածքում ռազմական անձնակազմի անդամների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները պայմանավորված են ուղարկող պետության անունից պաշտոնական լիազորությունների իրացմամբ:

Այսպիսով՝ օտարերկրյա ռազմական բազայի

և վերջինիս անձնակազմի անդամների միջազգային իրավական կարգավիճակը սահմանվում է տարբեր իրավական աղբյուրներից կազմված բարդ միջազգային իրավական համակարգի կողմից և մատնանշում վերջիններիս իրավաբանորեն երաշխավորված տեղն ուղարկող և հյուրընկալող պետություններում: Նշված սուբյեկտների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները պայմանավորված են իրենց գործառնությունով, այսինքն՝ հյուրընկալող պետությունում ուղարկող պետության անունից հանդես գալու լիազորություններով:

¹ Воеводин Л.Д. - Юридический статус личности в России. Учебное пособие. – М.: 1997, С. 12.

² Лукашева Е.А. - Общая теория прав человека. М., 1996, С. 28-31, Теория права и государства : учеб. для вузов / под ред. проф. Г. Н. Манова. М., 1996. С. 224.

³ Михалева Н.А. Конституционное право зарубежных стран СНГ: Учеб. пособие. - М.: Юристъ, 1999 http://adhdportal.com/book_3304_chapter_43__1._Ponjatie_i_konstituionnye_prinipy_pravovogo_statusa_cheloveka_igrazhdanina_v_zarubezhnykh_stranakh_SNG.html, Воеводин Л.Д. - Юридический статус личности в России. Учебное пособие. – М.: 1997, С. 50, Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001 http://web.krao.kg/16_yurisprudensia/0_pdf/32.pdf

⁴ Кивель В. Н. - Понятие правового статуса личности: вопросы теории <http://elib.bsu.by/bitstream/123456789/111100/1/57-61.pdf>

⁵ Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001 http://web.krao.kg/16_yurisprudensia/0_pdf/32.pdf

⁶ Воеводин Л.Д. - Юридический статус личности в России. Учебное пособие. – М.: 1997, С. 12.

⁷ Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001 http://web.krao.kg/16_yurisprudensia/0_pdf/32.pdf

⁸ Оппенгейм Л. -Международное право. Том I: Мир. Полутом 2, Москва 1949, стр.375 <https://naukaprava.ru/catalog/435/840/4658/28489?view=1>

⁹ The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 1953 https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf

¹⁰ Human rights of members of the armed forces- Recommendation 1742 (2006), Parliamentary Assembly, Council of Europe, <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17424>

¹¹ Декларация о правах человека в отношении лиц, не являющихся гражданами страны, в которой они проживают- резолюция 40/144 Генеральной Ассамблеи ООН от 13 декабря 1985 года

https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/not_nationals_rights.shtml

¹² Международное право: Учебник. Отв. Ред. Ю.М. Колосов, В.И. Кузнецов – М.: Междунар. отношения, 1999. С. 108.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Воеводин Л.Д. - Юридический статус личности в России. Учебное пособие. – М.: 1997.

2. Лукашева Е.А. - Общая теория прав человека. М., 1996 стр.28-31, Теория права и государства : учеб. для вузов / под ред. проф. Г. Н. Манова. М., 1996.

3. Международное право: Учебник. Отв. Ред. Ю.М. Колосов, В.И. Кузнецов – М.: Междунар. отношения, 1999.

4. Михалева Н.А. Конституционное право зарубежных стран СНГ: Учеб. пособие. - М.: Юристъ, 1999 http://adhdportal.com/book_3304_chapter_43__1._Ponjatie_i_konstituionnye_prinipy_pravovogo_statusa_cheloveka_igrazhdanina_v_zarubezhnykh_stranakh_SNG.html

5. Оппенгейм Л. -Международное право. Том I: Мир. Полутом 2, Москва 1949, <https://naukaprava.ru/catalog/435/840/4658/28489?view=1>
6. Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001 http://web.krao.kg/16_yurisprudensia/0_pdf/32.pdf
7. Кивель В. Н. - Понятие правового статуса личности: вопросы теории <http://elib.bsu.by/bitstream/123456789/111100/1/57-61.pdf>

Պաշտոնական փաստաթղթեր

8. The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 1953 https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf
9. Human rights of members of the armed forces- Recommendation 1742 (2006), Parliamentary Assembly, Council of Europe, <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17424>
10. Декларация о правах человека в отношении лиц, не являющихся гражданами страны, в которой они проживают- резолюция 40/144 Генеральной Ассамблеи ООН от 13 декабря 1985 года https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/not_nationals_rights.shtml

Ромела Манукян

Соискатель кафедры европейского и международного
права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Понятие международного правового статуса иностранных военных баз

Для более полного понимания правового статуса иностранных военных баз за рубежом и для углубленного решения возникающих правовых вопросов, прежде всего, необходимо пояснить, что означает правовой статус лица. Целью данного исследования является представление содержания термина “правовой статус”, характера правового статуса иностранных военных баз и условий, которые его формируют.

Ключевые слова: правовой статус, иностранная военная база, принимающее государство, отправляющее государство, персонал военной базы.

Romela Manukyan

PhD Student of the Chair of European and
International Law Faculty of Law of YSU

SUMMARY

The concept of international legal status of a foreign military base

In order to gain a more comprehensive understanding of the legal status of foreign military bases abroad and to find in-depth solutions to emerging legal issues, it is first of all necessary to understand what the legal status of the entity is. The purpose of this study is to present the content of the term “legal status”, the nature of the legal status of foreign military bases and the conditions that form it.

Key words: Legal status, foreign military base, host state, sending state, military base personnel

Բնագիրը ներկայացվել է 14.12.2022թ.

Ընդունվել է տպագրության 19.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Սիմոնյանը

ՈՌԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կրթության և գիտելիքի վարչություն, Բարձրագույն
կրթության քաղաքականության բաժնի ղեկավար,
Աբու Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ VRIO ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔ

ՀՀ բուհերի ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները դիտարկվում են բուհերի ռազմավարական կառավարման և մրցակցային դաշտի համատեքստում: Շեշտադրելով ռեսուրսների եզակիության, արժեքի ստեղծման ու դրանց միջոցով մրցակցային առավելության ձեռքբերման հնարավորությունները՝ հողվածում քննարկվում են ռազմավարական վերլուծության VRIO ռազմավարական հայեցակարգի կիրառման առավելություններն ու հնարավորությունները՝ հիմնվելով ԱՄՆ բուհերի լավագույն փորձի վրա և շեշտադրելով ՀՀ բուհերի ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման իրաչափ հնարավորությունները: VRIO ռազմավարական հայեցակարգն ունի ոլորտային տարբեր ուղղվածություններ, սակայն դրա ընդհանրություններն թույլ են տալիս հիմնավորել այս հայեցակարգի կիրառելիության նպատակահարմարությունն ինչպես շահույթ հետապնդող, այնպես էլ չհետապնդող կազմակերպությունների՝ բուհերի ռազմավարական կառավարման շրջանակներում:

Հիմնադրադր- ռազմավարական կառավարման համակարգ, ռազմավարական կառավարման գործիքակազմ, VRIO ռազմավարական հայեցակարգ, ռեսուրսահենք կառավորում:

Կազմակերպությունների ռազմավարական կառավարման հայեցակարգերն ու գործիքակազմերը օժանդակում են կազմակերպություններին կանոնադրական գործունեության, որոշումների կայացման գործընթացների, կիրառվող մեխանիզմների, միջոցների ու գործիքների արդյունավետության բարձրացմանը: Կառավարիչների կողմից կիրառվող նման հայեցակարգերն ու գործիքակազմերը պետք է հարմարեցվեն կազմակերպության կարիքներին՝ ապահովելով ռազմավարական կառավարման, ներդրումների իրականացման և մրցակցային առավելության ապահովմանն ու զարգացմանը միտված գործընթացների արդյունավետությունը:

1980-ականներին ռազմավարական կառավարման տեսության ուսումնասիրության հիմքում արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունն էր: Դեկլարաների հիմնական նպատակն էր ձեռք բերել մրցակցային առավելություն և ապահովել կազմակերպության առաջնային դիրքը ոլորտային մրցակիցների շարքում: Այնուամենայնիվ, տարիների ընթացքում տեխնոլոգիական զարգացման, արդյունաբերական փոփոխությունների հետ զուգընթաց RBV¹ տեսությունը շարունակաբար ամրապնդում էր իր դիրքերը ռազմավարական պլանավորման համատեքստում (Wills-Johnson 2008): RBV տեսության մոտեցմամբ ռազմավարական ակտիվները կարող են գնահատվել VRIO գործիքի

միջոցով: Չնայած նրան, որ հիմնականում ոչ նյութական ակտիվներն են համարվում մրցակցային առավելությունն ապահովող հիմնական աղբյուրները, VRIO-ն կիրառվում է նաև կազմակերպության նյութական ռեսուրսները գնահատելու համար (Ray et al. 2005): Եվ չնայած իր հստակ կառուցվածքին՝ այս գործիքի գործնական կիրառումը կախված է տեղեկատվական բազմաթիվ պահանջներից և լայնածավալ տեղեկատվության մշակումից: Հատկապես ոչ նյութական ռեսուրսների և հնարավորությունների հստակեցումն ու գնահատումը դժվար գործընթացներ են կազմակերպությունների համար (Dutta et al. 2005):

VRIO հայեցակարգը նաև կիրառվում է ձեռնարկատիրության ոլորտում կազմակերպության ռեսուրսների ու հնարավորությունների, մրցակցային առավելության ձևավորման և ներուժի վերլուծության համար. այս հայեցակարգը ստեղծվել է Բարնեյի (Barney 1991) կողմից, ով հայեցակարգը մանրամասն քննարկել է իր «Կազմակերպության ռեսուրսներ և կայուն մրցակցային առավելություն» աշխատությունում: VRIO գործիքը RBV հայեցակարգի գործնական կիրառումն է: RBV հայեցակարգը հիմնված է երկու հիմնական հասկացությունների վրա՝ ռեսուրսներ և ներուժակություն, և հաշվի է առնվում այն, որ դրանցից որոշները կապված են կազմակերպության տարբեր ռեսուրսների և կարողությունների հետեքոգեն բնույթի հետ, իսկ

որոշները՝ անշարժությունության գործոնի և կայուն բնույթի հետ՝ ի տարբերություն այն ծախսերի, որոնք կազմակերպությունը պետք է իրականացնի արտադրություն իրականացնելու համար (Peteraf and Bergen 2003): Ըստ RBV հայեցակարգի՝ մրցակցային առավելությունը ձևավորվում է կազմակերպության այն հիմնական ռեսուրսները զարգացնելու միջոցով, որոնք արժեքավոր են, հազվագյուտ, ոչ կրկնօրինակելի և ունեն կազմակերպական ուղղվածություն (Jugdev 2005):

Հոդվածում առաջարկվող VRIO ռազմավարական հայեցակարգի կիրառումը կարող է նպաստել կրթական հարափոփոխ միջավայրում ՀՀ բուհերի գործունեության արդյունավետության բարձրացմանը և կրթական շուկայում առաջնային դիրքի ձեռքբերմանը: VRIO ռազմավարական հայեցակարգի կիրառումը կրթական եզակի արժեքի ստեղծման նպատակով կարող է լինել հիմք մրցակցային առավելություն և բարձր արդյունավետությամբ կատարողական ունեցող բուհերի ստեղծման և զարգացման համար: Այս հայեցակարգի կիրառումը պետք է համապատասխանեցվի բուհերի կազմակերպական կարիքներին ու նպատակներին: Իսկ սահմանված նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատումը կարելի է կատարել բուհերում մաս VRIO հայեցակարգի կիրառմամբ: VRIO-ի չափանիշներին համապատասխան ռեսուրսները բուհի կայուն մրցունակությունն ու գործունեության արդյունավետությունն ապահովող արժեքավոր, եզակի, ոչ կրկնօրինակելի ռեսուրսներն են:

VRIO ռազմավարական հայեցակարգի ներդրման ու կիրառման հնարավորությունները նպատակահարմար է դիտարկել ինչպես շահույթ հետապնդող, այնպես էլ շահույթ չհետապնդող կազմակերպություններում, ներառյալ բուհերում՝ հաշվի առնելով այն, որ վերջիններս ևս գործում են մրցակցային դաշտում և անմասն չեն մնում մրցակցությամբ պայմանավորված մի շարք խոչընդոտներից: VRIO հայեցակարգի կիրառման հնարավորությունների ու առավելությունների ուսումնասիրությունների վերոնշյալ արդյունքները թույլ են տալիս հավաստել, որ տվյալ գործիքը կարող է դիտարկվել և կիրառվել մաս ՀՀ բուհերի համատեքստում, քանի որ վերջիններս նույնպես ունեն հազվագյուտ և արժեքավոր ռեսուրսներ, որոնք կարող են մրցակցային առավելություն ապահովել:

VRIO-ն՝ կազմակերպության ռեսուրսների և հնարավորությունների վերլուծության համար պարբերաբար կիրառվող գործիք է: Այն որոշում կայացնողներին տալիս է համակարգված, հիմնավորված չափանիշների ցանկ, որն անհրաժեշտ է

առկա ռեսուրսների ու հնարավորությունների ռազմավարական արժեքը գնահատելու, մրցակցային առավելություն ստեղծելու, ռեսուրսային կայունություն ապահովելու և կազմակերպության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար: Ռազմավարական այս հայեցակարգի կիրառմամբ վերլուծության է ենթարկվում ոչ միայն ներքին միջավայրի, այլ մաս արտաքին միջավայր գործոնները (Barney and Clark 2007), (Barney and Hesterly 2012):

VRIO ռազմավարական հայեցակարգի բաղադրիչները հատկորոշում են կազմակերպության այն ռեսուրսները, որոնք ապահովում են մրցակցային առավելություն և համապատասխանում են VRIO հայեցակարգի չափանիշներին, այսինքն՝ դրանք արժեքավոր են՝ (Valuable), հազվագյուտ (Rare), ոչ կրկնօրինակելի (Inimitable) և կազմակերպական ուղղվածություն ունեն (Organizational focus): Հոդվածում ներկայացվում ու վերլուծվում են նշված բաղադրիչները՝ ըստ տարբեր տեսաբանների կողմից առաջադրված սահմանումների ու դասակարգումների, ինչպես մաս ԱՄՆ բուհերում առկա լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքների: Հոդվածում հատկապես շեշտադրվում են հավելյալ արժեքի ստեղծումն ու ներգրավումը՝ որպես կայուն մրցակցային առավելության ձեռքբերման առանցքային գործոն: VRIO ռազմավարական հայեցակարգի չափանիշներին կազմակերպական ռեսուրսների և հնարավորությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով կազմակերպությունները պետք է առաջադրեն հետևյալ չորս հիմնական հարցադրումները. արդյոք ռեսուրսն արժեքավոր է, արդյոք ռեսուրսը հազվագյուտ է, արդյոք ռեսուրսը դժվար է կրկնօրինակել (Inimitable), արդյոք կազմակերպության ընդունված քաղաքականություններն ու իրականացվող գործընթացներն աջակցում են արժեքավոր, հազվագյուտ և դժվար կրկնօրինակվող ռեսուրսների օգտագործմանը:

Կազմակերպության արժեքավոր ռեսուրսները հնարավարություն են տալիս կազմակերպությանը արձագանքելու արտաքին միջավայրի վտանգներին ու հնարավորություններին և նպաստում են կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ռեսուրսն ունի արժեք, եթե դրա միջոցով կազմակերպությունն օգտագործում է հնարավորությունները և չեզոքացնում արտաքին միջավայրի սպառնալիքները (Jugdev 2005)? Արժեքն այն գինն է, որը հաճախորդը պատրաստ է վճարել ապրանքի համար առաջարկի մեկ աղբյուրի առկայության դեպքում: Արժեքը պայմանավորող կարևոր չափանիշներից են որակը, արա-

գությունը և ապրանքանիշը: Որակը վերաբերում է ապրանքի ֆունկցիոնալությանը, դիմացկունությանը և հուսալիությանը: Արագությունը ցույց է տալիս, թե որքան արագ կարող է կազմակերպությունը տվյալ ապրանքը հասցնել սպառողին: Ապրանքանիշը ներառում է այն հատկանիշները, որոնք սպառողները կապում են ապրանքի կամ դրա արտադրողի հետ, ներառյալ վստահությունը և այս ապրանքից ստացած դրական զգացումները:

Կայուն մրցակցային առավելություն ձեռք բերելու համար կարևոր են արժեքի ստեղծումը և արժեքի գրավումը: Կազմակերպությունը պետք է ստեղծի արժեք, որից ստացված օգուտը կգերազանցի կազմակերպության արտադրության ծախսերը: Կազմակերպությունը պետք է ստեղծի ամենալավ արժեքը, որպեսզի կարողանա առաջարկի ավելի մեծ ծավալ տրամադրել սպառողին: Արժեքը գրավելու՝ պահանջարկի մեծ մասը գրավելու համար կազմակերպության կողմից ստեղծված արժեքը պետք է լինի եզակի, իսկ եզակիությունը կարելի է ձեռք բերել բացառիկ որակի, հզոր ապրանքանիշի և/կամ արագության շնորհիվ (Bowman and Ambroshini 2007):

Ըստ Բարնեյի և Հեսթերի (Barney and Hesterly 2012)՝ այն կազմակերպությունները, որոնք ունեն արժեքավոր ռեսուրսներ, կարող են մշակել և ներդնել եզակի (յուրահատուկ) ռազմավարություններ, որոնց շնորհիվ էլ կկարողանան օգտվել շուկայական առավելություններից: Սակայն արժեքավոր և հազվագյուտ ռեսուրսները կարող են դառնալ մրցակցային առավելության ձեռքբերման աղբյուր, եթե այլ կազմակերպությունների համար դրանց ձեռքբերումը ֆինանսական լուրջ ծախսերի հետ է կապված. սա է ռեսուրսները դարձնում հազվագյուտ և ոչ կրկնօրինակելի:

Կազմակերպության ռեսուրսների հազվագյուտ լինելը ենթադրում է, որ այդ ռեսուրսները եզակի են և լայնորեն չեն կիրառվում այլ կազմակերպությունների կողմից: Լայն տարածում ունեցող ռեսուրսները մրցակցային առավելության աղբյուր չեն հանդիսանում. դրանք առավելագույնը կարող են մրցակցային հավասարություն ապահովել: Այսինքն՝ եզակիությունը մրցակցային առավելություն ապահովող անհրաժեշտ, բայց ոչ միակ գործոնն է (Barney 2007):

Կազմակերպության ռեսուրսները ոչ կրկնօրինակելի են. եթե կազմակերպության ռեսուրսները կարող են հեշտությամբ կրկնօրինակվել, ապա կազմակերպությունը կարող է ձեռք բերել մրցակցային առավելություն միայն արժեքի և եզակիության միջոցով: Այսինքն՝ ոչ կրկնօրինակելի բնույթը նշանակում է, որ կազմակերպությունները պաշտ-

պանում են իրենց ունեցած ակտիվներն ու ռեսուրսները, որպեսզի մրցակիցները չկարողանան դրանք հեշտությամբ կրկնօրինակել: Պատմական պայմանները կարող են կապված լինել շուկայի որևէ հատույթում երկար տարիներ գործունեություն ծավալելու արդյունքում կայուն դիրք ունենալու կամ ռեսուրսները ավելի ցածր գնով ձեռք բերելու հնարավորության հետ, որն այդ նույն ռեսուրսները ձեռք բերելու գործընթացը մյուս կազմակերպությունների համար դարձնում է գրեթե անհնար կամ ծախսատար: Երկրորդ գործոնը կապված է այն փաստի հետ, որ կրկնօրինակող կազմակերպությունները չեն կարողանում հասկանալ մրցակիցների ունեցած ռեսուրսների և կարողությունների կապը, որն ավելի է բարդացնում կրկնօրինակման համար անհրաժեշտ ռեսուրսների և կարողությունների ընտրությունը: Սակայն կարևոր է վերլուծել և գնահատել, թե որ ռեսուրսներն ու կարողություններն են մրցակցային առավելության ձևավորման արդյունավետ աղբյուրներ հանդիսանում:

Երրորդ գործոնը, որով կարող է պայմանավորել ռեսուրսների և կարողությունների ոչ կրկնօրինակելի բնույթը, սոցիալական բարդություն է: Նշվածը ենթադրում է, որ երբ մրցակցային առավելությունը կապվում է սոցիալական բարդության երևույթի հետ, ռեսուրսների ու կարողությունների կրկնօրինակման հավանականությունը նվազում կամ վերանում է: Բացի այդ, ղեկավարները կարող են կարծել, որ սոցիալական բարդությանը բնորոշ բոլոր հատկանիշները կարող են կարևոր լինել իրենց կազմակերպության հաջողության համար, սակայն դրանցից ոչ բոլորն են մրցակցային առավելություն պահպանելու հնարավորություն ընձեռում: Ավելին, կարևոր է այդ սոցիալական բարդությունը դարձնել մրցակցային առավելության ձեռքբերման աղբյուր՝ միավորելով տարբեր ռեսուրսներ և կարողություններ. անհատների, խմբերի և տեխնոլոգիաների միջև ցանցային հարաբերությունների ստեղծումը կարող է դառնալ մրցակցային առավելության հզոր աղբյուր:

VRIO վերլուծության գործիքի շրջանակում վերջին կարևոր հարցադրումներից է կազմակերպության ինքնավերլուծության իրականացումը, այսինքն՝ շեշտադրելով արդյոք կազմակերպության կողմից մշակված քաղաքականություններն ու գործընթացներն աջակցում են ռեսուրսների իրաչափ բաշխմանն ու օգտագործմանը: Կազմակերպամետ գործունեությունը վերաբերում է ղեկավարմանը և կառավարչական փորձառությանը, կառավարման գործընթացներին և կառավարչական որոշումներին (Barney 2007): Կազմակերպությունները, իրականացնելով ռեսուրսների և հնա-

րավորությունների կամ կարողությունների արդյունավետ կառավարումը հնարավոր դարձնող գործուն քաղաքականություններ, մեծացնում են շուկայում մրցակցային առավելության ու մրցունակ դիրքի ամրապնդման հնարավորությունները:

VRIO վերլուծության գործիքի կիրառմամբ՝ սեփական ռեսուրսներն ու կարողությունները հատ-

կորոշելով ու գնահատելով՝ կազմակերպությունները կարող են ապահովել մրցակցային առավելություն: Ընդ որում, վերլուծության և գնահատման փուլում հարկավոր է հաշվի առնել այդ ռեսուրսների ու կարողությունների նյութական, այնպես էլ ոչ նյութական ռեսուրսները:

Աղյուսակ 1.

Կազմակերպական ռեսուրսներ և կարողություններ

Նյութական ռեսուրսներ և ինստիտուցիոնալ կարողություններ	
Ֆինանսական	Կազմակերպության դրամական միջոցներ Կապիտալը և ցանկացած ներգրավվող ֆինանսական ռեսուրս Սևփական կապիտալի ներգրավման կարողություն Կազմակերպության փոխառու միջոցներ Այլ արժեքիչքեր
Ֆիզիկական	Հիմնական միջոցներ (շենք, շինություններ և տարածքներ, մեքենա, սարքավորումներ և այլն) Հումքային ռեսուրսներ
Տեխնոլոգիական	Տեխնոլոգիաներ Արտադրության (ծառայությունների մատուցման) նորարարական գործընթացներ Արտոնագրեր Ապրանքանիշներ Մտավոր սեփականության այլ միավորներ Հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ գյուտեր, օգտակար մոդելներ և արդյունաբերական նմուշներ
Կազմակերպական	Դաժմավարական կառավարման արդյունավետ համակարգեր և գործընթացներ Գործունեության կառուցողականի զննախոսումն և վերափոխումն ապրկումովետ համակարգեր Մարդկային կապիտալի տվյալահեր կառավարում
Ոչ նյութական ռեսուրսներ և ինստիտուցիոնալ կարողություններ	
Մարդկային	Ինստիտուցիոնալ գլխելիք Աշխատակիցների փորձ և կարողություններ Կառավարչական իմունություններ
Նորարարական և ստեղծագործական	Գլխական ներուժ Նորարարական ու ստեղծագործական ներուժ
Հեղինակություն	Ձևավորված կազմակերպական ավանդույթներ և ինստիտուցիոնալ պատմություն Կրթության որակի և փոսախության համրավ հաճախորդների շրջանում Շահակիցների փոսախություն Հաճախորդանետ քաղաքականություն Թախանցիկություն և համրավ մատակարարների շրջանում

Փոխառված և համարվում է՝ Յուգլև (Jugdev 2012)

Աղյուսակ 1-ում ներկայացված են կազմակերպության այն ռեսուրսները ու կարողությունները, որոնք VRIO հայեցակարգի կիրառման շրջանակներում պետք է գնահատել, քանի որ հենց այդ ռեսուրսների միջոցով է ձեռք բերվում մրցակցային

առավելություն: Նմանատիպ վերլուծությունների արդյունքների հիման վրա որոշում կայացնողները պետք է հստակեցնեն հատկացված ռեսուրսների և կարողությունների մրցակցային ներուժը՝ դրանք դասակարգելով թույլ և ուժեղ կողմերի:

Աղյուսակ 2.

VRIO շրջանակում ռեսուրսների մրցակցային ներուժի գնահատում

Եթե կազմակերպության ռեսուրսները		Կազմակերպությունը կարող է ունենալ
թանկ չեն	→	մրցակցային թելություն
թանկ են, քայց եզակի չեն	→	մրցակցային հավասարություն
թանկ են և եզակի	→	մրցակցային առավելություն, բեկ ժամանակավառ
թանկ են, եզակի, քայց հեշտ կրկնօրինակվալ	→	ժամանակավառ մրցակցային առավելություն
թանկ են, եզակի և դժվար կրկնօրինակվալ	→	կայուն մրցակցային առավելություն

Փոխառված է՝ Յուգլև (Jugdev 2012)

Ռեսուրսների նմանատիպ գնահատումները հնարավորություն են ընձեռում կատարելու կանխատեսումներ կազմակերպության կողմից ձեռք բերված մրցակցային առավելությունների և դրանց հետ կապված տնտեսական ցուցանիշների վերաբերյալ: Ավելի հստակ՝ կազմակերպության ռեսուրսները և կարողությունները դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների, որոնք առաջացնում են մրցակցային թերություն, մրցակցային հավասարություն, ժամանակավոր մրցակցային առավելություն կամ կայուն մրցակցային առավելություն (Bresser and Powalla 2012):

VRIO ռազմավարական հայեցակարգի կիրառումը ՀՀ բուհերում

Բուհերի ռազմավարական կառավարումը բազմաբաղադրիչ գործընթաց է՝ նպատակաուղղված բուհերի ստեղծած կրթական արժեքի բարելավմանն ու զարգացմանը, որը պետք է համապատասխանի ժամանակակից որակյալ կրթության պահանջներին: ՀՀ բուհերում ռազմավարական կառավարման գործընթացները միտված են ազգային, տարածաշրջանային և միջազգային աշխատաշուկաների և կրթական շուկաների տարբեր հատկություններում մրցունակ կրթական ծառայությունների ստեղծմանը և տարածմանը: ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ռազմավարական կառավարումն ունի որոշակի առանձնահատկություններ, քանի որ բուհերը հիմնականում հիմնադրամներ են իրենց կազմակերպատիրական ձևով և համարվում են շահույթ չհետապնդող կազմակերպություններ: Այդպիսի կազմակերպություններում ռազմավարական կառավարման գործընթացների արդյունավետ իրականացումը պայմանավորված է արդյունավետ ռազմավարական հայեցակարգերի և գործիքակազմերի ներդրմամբ ու կիրառմամբ: Սակայն, ՀՀ բուհերի համատեքստում ռազմավարական կառավարման գործընթացների արդյունավետ իրականացումը դեռևս ամբողջությամբ չի իրականացվում:

Գործունեության յուրաքանչյուր ոլորտում մրցունակ լինելու համար բուհերը պետք է ստեղծեն և ամրապնդեն իրենց մրցակցային առավելությունները: Մրցակցային առավելություն ձեռք բերելու տեսանկյունից ռազմավարական հայեցակարգերի կիրառումը կարևոր է նաև ՀՀ բուհերի համար. բուհերի ունեցած առավելությունները և տեսակով եզակի ռեսուրսները որպես առավելություն կիրառելը կարող են ապահովել դրանց առաջնային դիրքը կրթական շուկայում: Մասնավորապես VRIO ռազմավարական հայեցակարգը կարող է օժանդակել բուհերին ապահովել մրցակցային առավելությունն իրենց ունեցած հազվագյուտ, արժեքա-

վոր ռեսուրսներով՝ դրանք վերլուծության ենթարկելով և գնահատման արդյունավետ գործընթացներ իրականացնելով: VRIO-ի օգնությամբ բուհերը կարող են մրցել դինամիկ և հարափոփոխ մրցակցային միջավայրում: Ըստ Տուրգեյի և Ալիավամդեհի (Turgay and Alhawamdeh 2013)՝ բուհերի կողմից ռազմավարական պլանավորման իրականացումը VRIO հայեցակարգի միջոցով կարող է բարելավվել մատուցվող կրթական ծառայությունները, պահպանել և մեծացնել նրանց մրցակցային դիրքը, գրավել նոր շուկաներ միջազգային տարբեր հատկություններով:

Առողջ մրցակցային դաշտ ապահովելու համար բուհերն իրենց կրթական, հետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների միջոցով խթանում են հանրության կրթական կարիքների բավարարումն ու սոցիալ-տնտեսական աճը: Բացի այդ, բուհերը տվյալ երկրի գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացման գործընթացում էական ներդրում ունենալու և այդ նպատակով իրենց ծառայությունները շահակիցների համար գրավիչ դարձնելու հանձնառություն ունեն (Cardeal and Antgnio 2012): Հետևապես, այդ հանձնառության արդյունավետ իրականացման համար առանցքային նախապայմաններ են դառնում կատարողականության շարունակական կատարելագործումը, ռազմավարական կառավարման արդյունավետ մոդելների ու գործունեության արդյունքների չափումների կիրառումը, ինչպես նաև արժեքավոր ռեսուրսների ստեղծումը, պահպանումը, գնահատումն ու շարունակական բարելավումը:

Բուհերի կողմից VRIO-ի կիրառումը նույնպես ներառում է առկա ռեսուրսների, կարողությունների ու հնարավորությունների գնահատում և դասակարգում: Այդ ռեսուրսների զարգացումը հիմնականում ապահովվում է մարքեթինգային, ցանցային, կառավարման, ներդրումների և նորարարական ներուժի կիրառմանը միտված գործընթացների իրականացմամբ: Բուհերի միջև առկա մրցակցությունը պայմանավորված է գերազանցության այնպիսի տարրերով, ինչպիսիք են որակյալ կրթության ապահովման գերազանցությունը, մրցունակ գիտական հետազոտությունների հանձնառությունը, բարձրագույն կրթության որակի և հավատարմագրման չափանիշների բավարարումը, տարածաշրջանային և միջազգային շուկաներում մրցունակ լինելու հանձնառությանը համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը, ֆինանսական ռեսուրսների բազմազանացումը, ինչպես նաև դրանց կադրային ներուժի զարգացումը (Indartono et al. 2017):

Ռեսուրսների և հնարավորությունների բացա-

հայտման, գնահատման և դասակարգման նպատակով բուհերում VRIO հայեցակարգի կիրառումը տալիս է հետևյալ երեք գլխավոր առավելությունները: Մասնավորապես՝ VRIO հայեցակարգը՝

- կարող է օժանդակել բուհին հստակեցնելու սեփական կենսական ներուժն ու մարդկային կարողությունները, որոնք արժեքի ստեղծման շարժիչ ուժերն են:

- կիրառվում է դժվար չափելի ռեսուրսների, այդ թվում՝ ոչ նյութական ակտիվների որակական ու քանակական գնահատման համար. արժեքավոր, հազվագյուտ և ոչ կրկնօրինակելի ռեսուրսները սովորաբար անհասանելի են իրենց բնույթով և դժվար չափելի:

- փոխկապակցում է կազմակերպության ներքին միջավայրի բաղադրիչները և դրա արտաքին միջավայրը, ինչպես նաև օժանդակում է կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությանը, որը կարևոր է հաշվի առնել ռազմավարական որոշումների կայացման գործընթացներում:

VRIO հայեցակարգի ներդրման և կիրառման գործընթացներում բուհերի համար կարող են առաջացնել որոշակի դժվարություններ, մասնավորապես՝

- փոքր բուհերի համար VRIO հայեցակարգի ներդրումը դժվար է, քանի որ դրանք կարող են դեռևս չունենալ բավարար ռեսուրսներ կամ կարողություններ կայուն մրցակցային առավելություն ձեռք բերելու համար:

- բուհերը գործում են հարափոփոխ արտաքին միջավայրում, և կայուն ու երկարաժամկետ մրցակցային առավելություն ձեռքբերելը դժվար է, այսինքն՝ բուհերը պարզապես պետք է ապահովեն իրենց մրցակցային առավելությունը կարճաժամկետ կտրվածքով:

- այս հայեցակարգը կիրառելիս հաշվի չեն առնվում որոշակի էական գործոններ, օրինակ՝ շուկայում պահանջարկի փոփոխությունը:

Ցանկալի է, որ VRIO հայեցակարգի միջոցով բուհերի ռեսուրսների գնահատման և զարգացման գործընթացներն ուղեկցվեն նաև PEST³ վերլուծության գործիքի կիրառմամբ: Արտաքին միջավայրի հնարավոր գործոնները կանխատեսելով՝ բուհերը միաժամանակ ուրվագծում են իրենց գործունեության զարգացման միտումները, տեսանելի դարձնում հնարավոր վտանգներն ու հնարավորությունները՝ ելնելով սեփական կատարողականի բարելավման առաջնահերթությունից: PEST վերլուծության միջոցով բուհերն իրենց գործունեության արդյունավետության իրաչափ գնահատման հիմքեր են ձեռք բերում, իսկ վերլուծության բազմակողմանիությունը թույլ է տալիս կանխել հնարավոր վտանգ-

ները և առավել մատչելի է դարձնում ռազմավարական գերակա նպատակներին հասնելու ուղիները: Այսինքն՝ արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունից դուրս բերված արդյունքները VRIO հայեցակարգի կիրառման շրջանակներում կարող են նպաստել մրցակիցների համեմատ առավել արդյունավետ ռազմավարական պլանավորմանն ու ռազմավարությունների մշակմանը, ինչպես նաև մրցակցային առավելություն ստեղծելու ներուժ ունեցող, եզակի և/կամ ոչ կրկնօրինակման ենթակա ռեսուրսների ու կարողությունների բացահայտմանը:

Հատկապես բուհերում կրթական արժեքավոր ռեսուրս ստեղծելու գործընթացում կարևորվում են մարդկային ռեսուրսները ու կարողությունները: Մարդկային ռեսուրսի կամ կազմակերպության աշխատակազմի՝ որպես ամենարժեքավոր կապիտալի կարևորության շեշտադրումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ դրանք միակ «մտավոր» ռեսուրսներն են, և ցանկացած մրցունակ բուհի գործունեության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է նրանց գիտելիքներից, նորարարական և ստեղծագործական կարողություններից, փորձից: Ժամանակակից տեխնոլոգիաները և կառավարչական մեթոդները մարդկային ռեսուրսների կառավարման նոր ուղղություններ են պահանջում (Pešić et al. 2013):

Մարդկային ռեսուրսները ցանկացած կազմակերպության, այդ թվում՝ բուհերի մրցունակության ապահովման կարևոր նախապայմանն են, հետևապես մարդկային ռեսուրսով պայմանավորված մրցակցության համար կարևոր երեք գործոններն են:

- մրցակցային պայմաններում փոփոխություններին արագ արձագանքելու և հարմարվելու կառավարչական կարողությունը. բուհերի համար սա կարող է լինել, օրինակ, կրթական շուկայում նոր կրթական ծրագրի պահանջարկի առաջացումը, որի ներդրումը կնպաստի առաջնային մրցակցային դիրքի ձեռքբերմանը:

- մրցակցային առավելություն ստեղծող տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը. բուհերում կրթական արդյունավետ և ժամանակակից գործընթացների կազմակերպումը մեծապես պայմանավորված է նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ և դրանք այդ գործընթացների անբաժանելի, կարևոր մաս դարձնելու նախապայմանի ապահովմամբ:

- գիտելիքահենք հասարակությունը բարձրացնում է պետության արդյունավետությունն ու մրցակցությունը. բուհական համակարգի համար երկրի մրցունակությունը կարևորվում է տարա-

ծաշրջանային և միջազգային կրթական հատույթներ մուտք գործելու տեսանկյունից:

Հաշվի առնելով բուհերի մարդկային ռեսուրսների՝ որպես մրցակցային առավելության ձեռքբերման ու ապահովման առաջնային աղբյուրի կարևորությունը՝ ակնհայտ է դառնում, որ բուհերի մարդկային ռեսուրսները ևս պետք է տարբեր վերլուծական գործիքների կիրառմամբ պարբերաբար գնահատվեն ու կատարելագործվեն: Մասնավորապես VRIO հայեցակարգի կիրառմամբ բուհերի կողմից մարդկային ռեսուրսների գնահատումը պետք է իրականացվի ըստ արժեքի, եզակիության, անկրկնելության և զարգացման դիմամիկության: ՀՀ բուհերի կողմից գործունեության համար չկրկնվող ռեսուրսների ապահովումը, այսինքն՝ եզակի կրթական ծրագրերի ներդրումը կամ ազգային շուկայում մրցակցային կադրերի պատրաստումը կնպաստի հավելյալ և որակյալ արժեքների ստեղծմանը: Այսպիսով, ռազմավարական կառավարման շրջանակներում բուհերի համար մրցակցային առավելություն ապահովելու, շուկայական առաջնային դիրք գրավելու և տնտեսական արժեք ստեղծելու գլխավոր նախապայմաններից են առկա ռեսուրսների ու կարողությունների հստակեցումն ու գնահատումը: VRIO ռազմավարական հայեցակարգն օժանդակում է կառավարիչներին գնահատել առկա բոլոր ինստիտուցիոնալ ռեսուրսներն ու հնարավորությունները՝ ըստ արժեքի, եզակիության, կրկնօրինակելիության մակարդակի և կազմակերպության չափանիշների, դասակարգել դրանք, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի ունեցած արժեքը և ներդրումը կազմակերպության մրցակցային առավելության ձևավորման գործում: Հոդվածում առաջարկված ռազմավարական հայեցակարգի ներդրումը ՀՀ բուհերում կնպաստի կրթական շուկայում առաջատար և որակյալ հավելյալ արժեքի ստեղծմանը և կրթական որակյալ ծառայությունների մատուցմանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման շրջանակներում անհրաժեշտ բարեփոխումների իրականացման համար առաջարկվում է.

- պարբերաբար իրականացնել կազմակերպական կարիքների բացահայտում և ոլորտային խորքային վերլուծություններ՝ ներկայիս կրթական հարափոփոխ պայմաններում ՀՀ բուհերում ռազմավարական կառավարման արդյունավետության բարելավման նպատակով,

- պարբերաբար կատարել միջավայրային վերլուծություններ ու կարիքների ուսումնասիրություններ՝ VRIO հայեցակարգի համադրմամբ կիրառելով SWOT և PEST ռազմավարական գործիքները՝ ռազմավարական կառավարման արդյունա-

վետությունը բարձրացնելու նպատակով.

- կատարել ռազմավարական գործիքակազմերի և հայեցակարգերի ընտրություն ու դրանց ներդրման նպատակով բարելավել ռազմավարական կառավարման համակարգը,

- VRIO ռազմավարական հայեցակարգի կիրառմամբ շարունակաբար կատարել բուհի ռեսուրսների, կարողությունների և հնարավորությունների գնահատում և դասակարգում: Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ մրցակցային առավելության ձեռքբերմամբ գործում էական նշանակություն ունեցող ռեսուրսների բացահայտումը կնպաստի որակյալ կրթության ապահովմանը, միջազգային չափանիշներին համապատասխան ենթակառուցվածքների զարգացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, և կրթության գերազանցության կենտրոնների ձևավորմանը:

Այսպիսով, վերոնշյալ առաջարկություններում թվարկված հայեցակարգերի ու գործիքակազմերի կիրառումը և համապատասխան փոփոխությունների ներմուծումը ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման գործընթացներում կնպաստեն ժամանակակից կրթական շուկայի պահանջներին համապատասխան կրթական ծառայությունների ստեղծմանն ու մատուցմանը, կատարողականի արդյունավետության բարձրացմանն ու կայուն մրցակցային առավելության ձեռքբերմանը, բուհերի կողմից առաջարկվող ծառայությունների հանդեպ պահանջարկի ու վստահության բարձրացմանը:

¹ RBV-ն անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից կազմված հապավում է՝ Resource-Based View, այսինքն՝ ռեսուրսների վրա հիմնված տեսություն:

² VRIO հապավումը կազմված է անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից՝ V (Value)՝ արժեքավորություն, R (Rarity)՝ հազվադեպություն, I (Imitability)՝ կրկնօրինակելիություն, O (Organization)՝ կազմակերպում:

³ PEST-ը հապավում է, որը կազմված է անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից՝ P (Political)՝ քաղաքական, E (Economic)՝ տնտեսական, S (Social)՝ սոցիալական, T (Technological)՝ տեխնոլոգիական գործոններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Barney, J. B. & Clark, D. N. 2007. Resource-Based Theory: Creating and Sustaining Competitive Advantage, 316 p.
2. Barney, J. B. & Hesterly, W. S. 2012. Strategic Management and Competitive Advantage: Concepts and cases, 4th Ed. New Jersey: Pearson, 375 p.
3. Barney, J. B. 1991. Firm Resources and Sustained Competitive Advantage. Journal of Management 17 (1): pp. 99-120.
4. Bowman, C. & Ambrosini, V. 2007. Identifying Valuable Resources. European Management Journal, 25(4), pp. 320-329.
5. Bresser, R. K. F. & Powalla, Ch., 2012. Practical Implications of the Resource-Based View, Journal of Business Economics, Vol. 82 (4), pp. 335-359.
6. Cardeal, N. & Antgnio, N. 2012. Valuable, Rare, Inimitable Resources and Organization (VRIO) Resources or Valuable, Rare, Inimitable Resources (VRI) Capabilities: What leads to competitive advantage? African Journal of Business Management Vol. 6(37), pp. 10159-10170.
7. Dutta, S., Narasimahan, O., & Rajiv, S. 2005: Conceptualizing and Measuring Capabilities: Methodology and Empirical Application: Strategic Management Journal 26 (3), pp. 277-285.
8. Indartino, S., Wibowo, F. W., & Sudiyatno, S. 2017. VRIO and THES Based Development of University Competitive Advantage Model in Formulating University Strategic Plan, International Journal of Information, Vol. 20, No 10(A), pp. 7275-7283.
9. Jugdev, K. 2005. The VRIO Framework of Competitive Advantage: Preliminary Research Implications for Innovation Management. Portland International Conference on Management of Engineering and Technology: A Unifying Discipline for Melting the Boundaries, Portland, Oregon, July 31 - August 4.
10. Jugdev, K. 2012. Learning from Lessons Learned: Project Management Research Program. American Journal of Economics and Business Administration, 4(1), pp. 13-22.
11. Peši?, M., Jankovi? V. M., & Stankovi?, J. 2013. Application of VRIO Framework for Analyzing Human Resources' Role in Providing Competitive Advantage. Tourism & Management Studies, Vol. 2, pp. 575-586.
12. Peteraf, M. A. & Bergen, M. E. 2003. Scanning Dynamic Competitive Landscapes: A Market-Based and Resource-Based Framework. Strategic Management Journal, Vol. 24 (10), pp. 1027-1041.
13. Ray, G., Barney, J. B., & Muhanna, W. A. 2005. Information Technology and the Performance of the Customer Service Process: A Resource-Based Analysis. MIS Quarterly: Management Information Systems, Vol. 29, No 4, pp. 625-652.
14. Turgay, T. & Alhawamdeh, Z. M. 2013. Impact of the Strategic Statements Adopted by Jordanian Private Universities in Relation to their Performance, European Scientific Journal, Vol. 9, No 2, pp. 42-54.
15. Wills-Johnson, N. 2008. The Networked Firm: A framework for RBV. Journal of Management Development, 27(2), pp. 214-224.

Ռոբերտ Խաչատրյան

Департамент образования и знаний, Абу-Даби (АДЕ), ОАЭ
Начальник отдела политики высшего образования,
Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

*Стратегическая концепция VRIO оценки ресурсов как инструмент
обеспечения конкурентоспособности университетов РА*

Проблемы управления ресурсами университетов РА и пути повышения их эффективности рассматриваются в контексте стратегического управления университетами и их конкурентоспособности. Подчеркивая уникальность ресурсов, создание ценности и возможности получения конкурентного преимущества за счет ресурсов, в статье рассматриваются преимущества и возможности использования стратегической концепции VRIO оценки ресурсов, основанной на передовом опыте университетов США и подчеркивающей реальные возможности повышения эффективности управления ресурсами университетов РА. Стратегическая концепция VRIO имеет разную отраслевую направленность, но ее общность и методология обеспечивают обоснованность этой концепции в рамках стратегического управления как коммерческими, так и некоммерческими организациями, включая университеты.

Ключевые слова: система стратегического управления, инструмент стратегического управления, стратегическая концепция VRIO оценки ресурсов, ресурсное управление.

Robert Khachatryan

The Abu Dhabi Department of Education and Knowledge (ADEK)
Manager of Higher Education Policy Section, UAE,
PhD, Associate Professor

SUMMARY

*VRIO strategic resource evaluation framework as a tool
for ensuring the competitiveness of RA universities*

The resource management problems of the RA universities and the ways of increasing their efficiency are considered in the context of strategic management of universities and their competitiveness. Emphasizing the uniqueness of resources, value creation and the possibilities of gaining competitive advantage through the resources, the article discusses the advantages and opportunities of using the VRIO strategic concept of strategic analysis, based on the best practices of US universities and emphasizing the real possibilities of increasing the efficiency of the RA universities' resource management. The VRIO strategic concept has different sectoral focusses, but its commonalities and methodology provide the justification of this concept within the strategic management of both for-profit and non-profit organizations, including universities.

Key words: strategic management system, strategic management toolkit, VRIO strategic resource evaluation framework, resource-based management.

Բնագիրը ներկայացվել է 03.11.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է. Ղազարյանը

ԱՆՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական
ծառայության գրասենյակի կազմակերպիչական
վարչության գլխավոր իրավաբան
ՀՀ ԳԱԱ փոխտնօրինության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Հոգվածը նվիրված է հանրային ծառայության առանձին տեսակ համարվող համայնքային ծառայության ոլորտում առկա օրենսդրական հիմնախնդիրների վերհամանդր և դրանց համակողմանի ուսումնասիրությանը: Մասնավորապես՝ հոգվածում ներկայացվել են համայնքային ծառայության ոլորտում առկա խնդրահարույց օրենսդրական հիմնախնդիրները, այդ լույսի ներքո կատարվել են եզրահանգումներ և համայնքային ծառայության ոլորտը կանոնակարգելու և առավել ամբողջական դարձնելու նպատակով ներկայացվել են համապատասխան օրենսդրական առաջարկություններ և իրավական լուծումներ:

Հիմնաբառեր - *համայնքային ծառայություն, համայնքային ծառայության պաշտոն, վերապատրաստում, դասային աստիճան, ատեստավորում:*

Ինչպես հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ, այնպես էլ համայնքային ծառայությունը ունի համայնքային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական հիմնախնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական-իրավական լուծումներ: Համայնքային ծառայության համակարգում ներկայումս կարևորագույն հիմնախնդիր է համայնքային ծառայության օրենսդրության արդիականացումն ու կատարելագործումը, օրենսդրության մեջ առկա հակասությունների, թերությունների բացահայտումը, վերհանումը և դրանց իրավական կարգավորումներ տալը: Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կատարել համայնքային ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրական փոփոխություններ, պարզեցնել և արդիականացնել օրենսդրական կարգավորման մեխանիզմները և ընթացակարգերը, նախատեսել օրենսդրության հետևողական կիրարկման և դրա նկատմամբ վերահսկողության գործունե մեխանիզմներ, որոնց շնորհիվ համայնքային ծառայությունը կդառնա ժամանակի մարտահրավերներին դիմագրավող, մրցունակ և արդյունավետ գործունեություն՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարման ապահովմանը, քանի որ տեղական ինքնակառավարման մարմիններում հենց համայնքային ծառայությունն է կոչված կյանքի կոչել համայնքի/պետության քաղաքականությունը առողջապահության, տնտեսության, սոցիալական զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներում: Այսինքն՝ ներ-

կայումս համայնքային ծառայության օրենսդրական համակարգում դեռևս գոյություն ունեն որոշակի հիմնախնդիրներ, որոնք պահանջում են գիտական լուրջ վերլուծություններ և գիտականորեն փաստարկված օրենսդրական-իրավական լուծումներ: Այսպես՝

Հանրային ծառայության համակարգում պետական ծառայության բոլոր տեսակների գործունեության ընթացքում կարևոր դերակատարություն և նշանակություն ունեն այդ ծառայությունների ղեկավարման և կառավարման մարմինները: Մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության համակարգում քաղաքացիական ծառայության ղեկավարումը և միասնականությունն ապահովում է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ համայնքային ծառայության համակարգում համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմիններն են՝ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը) և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը: «Համայնքային ծառայության մասին» օրենքի՝ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համայնքային ծառայության ղեկավարման գործառնությունը հիմնականում կենտրոնացած է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ձեռքում, ինչը արդեն իսկ հակասում է տեղական ինքնակառավարման ինստիտուտի ինքնուրույն և անկախ գոյության տրամաբանությանը: Բացի այդ, Տարածքային կա-

ռավարման և ենթակառուցվածքների նախարարությունը չի կարող ամբողջությամբ ու արդյունավետ իրականացնել համայնքային ծառայության բնագավառում իր խնդիրներն ու գործառնությունները, քանի որ համայնքային ծառայության ղեկավարումն իր մեջ ներառում է համալիր բնույթի իրավահարաբերությունների ամբողջություն, որոնք պահանջում են ամենօրյա ռեժիմով մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարում և վերահսկողություն, անձնակազմի կառավարման աշխատանքների կազմակերպման մեթոդական ցուցումներ, համայնքային ծառայության միասնականության ապահովում:

Ըստ Վուդրո Վիլսոնի տեսության՝ կառավարման ցանկացած համակարգում պետք է գոյություն ունենա միասնական ղեկավարման կենտրոն, որպես նրա արդյունավետության և պատասխանատվության անհրաժեշտ պայման²:

Համայնքային ծառայության զարգացման ամեն մի փուլում ծագում են նոր խնդիրներ և դրանց կարգավորումը պետք է մշտապես գտնվի համակարգը ղեկավարող ու կազմակերպող մարմնի և հասարակության ուշադրության կենտրոնում³:

Վերոգրյալի հաշվառմամբ մենք նույնպես գտնում ենք, որ համայնքային ծառայության արդյունավետության ապահովման համար կարևոր քայլ կհանդիսանա համայնքային ծառայության համակարգի ղեկավարման և կազմակերպակառավարչական հարցերը կարգավորող կենտրոնացված մարմնի առկայությունը, ինչպես Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի դերակատարությունը քաղաքացիական ծառայությանն առնչվող իրավահարաբերությունների կանոնակարգման գործում, հետևաբան հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ առաջարկում ենք ստեղծել համայնքային ծառայությունը ղեկավարող և վերահսկողություն իրականացնող կենտրոնացված կառույց՝ Համայնքային ծառայության գրասենյակ՝ Համայնքային ծառայության գրասենյակին վերապահելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը համայնքային ծառայության համակարգում վերապահված լիազորությունները՝ դրանով իրացնելով նաև տեղական ինքնակառավարման մարմինների անկախ և ինքնուրույն գործելու սահմանադրաիրավական ինստիտուտի բովանդակությունը:

Հաջորդ կարևորագույն հիմնախնդիրը համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար հայերենին տիրապետելու հարցն է: Հաշվի առնելով, որ համայնքային ծառայության պաշտոն

զբաղեցնելու իրավունք ունեն ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև փախստականները, արդարացիորեն հարց կարող է առաջանալ՝ արդյո՞ք փախստականները տիրապետում են հայերենին կամ առհասարակ, համայնքային ծառայության կամ հանրային ծառայության կամ հանրային պաշտոնի հավակնող անձինք տիրապետում են հայերենին կամ ի՞նչ կառուցակարգերով և մեխանիզմներով է գնահատվում ու ստուգվում հայերենին տիրապետելու պահանջը:

Այս առումով հարկ է նկատի ունենալ Սահմանադրության⁴ 20-րդ հոդվածով սահմանված իրավանորմի բովանդակությունը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, իսկ «Լեզվի մասին» օրենքով⁵ սահմանված է, որ հայերենն սպասարկում է Հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Միևնույն ժամանակ «Լեզվի մասին» օրենքով ամրագրված է, որ պաշտոնատար անձինք պարտավոր են տիրապետել գրական հայերենին, իսկ պետական մարմինները, ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկները գործավարությունը պետք է կատարեն գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

Այսինքն՝ վերոնշյալ օրենսդրական կարգավորումների բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ համայնքային ծառայության (ինչպես նաև պետական ծառայության և հանրային պաշտոն) պաշտոն զբաղեցնելու համար հայերենին տիրապետելու պահանջը իմպերատիվ է, պարտադիր, քանի որ եթե համայնքային ծառայողը կամ պաշտոնատար անձը չի տիրապետում պետական լեզվին, հետևաբար չի կարող ամբողջ ծավալով և լիարժեք իրականացնել իր պարտականությունները:

Վ. Ներոզնյակի բնորոշմամբ պետական լեզուն տվյալ պետության սահմաններում կատարում է ինտեգրացիոն գործառնությ քաղաքական, պաշտոնական, մշակութային ոլորտներում և հանդես է գալիս որպես տվյալ պետության խորհրդանիշ⁶:

Հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև հանրային ծառայության բոլոր տեսակների համար տվյալ ոլորտը կանոնակարգող օրենքներով սահմանված է հայերենին տիրապետելու պարտադիր պահանջ, այնուամենայնիվ, սահմանված չեն հայերենի տիրապետման պահանջը գնահատող կամ ստուգող կառուցակարգեր, մեխանիզմներ կամ լիազոր մարմին, հետևաբար կարող ենք փաստել, որ գործնականում որևէ կերպ

չի ստուգվում անձի հայերենին տիրապետելու օրենսդրական պահանջը: Այս կարևորագույն հիմնախնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք ստեղծել անձի հայերենի գիտելիքների ստուգման միասնական համակարգ, և այդ գործառնության իրականացումն ու ապահովումը վերապահել Լեզվի կոմիտեին: Այս դեպքում նախքան հանրային ծառայության (համայնքային ծառայության) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելը կամ հանրային պաշտոնում նշանակվելը՝ բոլոր թեկնածուները Կառավարության սահմանած կարգով պետք է հանձնեն հայոց լեզվի գրավոր քննություն և Կառավարության սահմանված նվազագույն գնահատականից ցածր ստանալու դեպքում թեկնածուին չթույլատրվի մասնակցել հանրային ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին կամ հանրային պաշտոնում նշանակում չկատարվի: Հարկ է նկատել, որ վերոնշյալ առաջարկությունը բխում է նաև «Լեզվի մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված իրավանորմի պահանջից, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է, և պաշտոնատար անձինք պարտավոր են տիրապետել գրական հայերենին:

Համայնքային ծառայության համակարգում լրջագույն հիմնախնդիր է նաև համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացը: Այսպես՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *համայնքային ծառայողների վերապատրաստումն անցկացնում են օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունները*: Այսինքն՝ թե՛ համայնքային ծառայության, թե՛ քաղաքացիական ծառայության համակարգում հանրային ծառայողների վերապատրաստումն իրականացնում են գնման ընթացակարգով ընտրված կազմակերպությունները, ինչը համարում ենք ոչ նպատակային և անարդյունավետ, քանի որ նախ՝ ամեն անգամ ընտրվում են տարբեր կազմակերպություններ, և բացի այդ, գտնում ենք, որ համայնքային ծառայողների վերապատրաստումը պետք է իրականացնի հատուկ մասնագիտական կառույց, որը վեր կհանի համայնքային ծառայողի կարիքները, կգնահատի հանրային ծառայողների կարիքները, և ըստ այդմ, այդ կարիքների գնահատման հիման վրա կիրականացնի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացը:

Համայնքային ծառայողների կարիքների հիման վրա վերապատրաստում իրականացնելու համար առաջարկում ենք ստեղծել հատուկ կառույց՝ Հանրային ծառայողների վերապատրաստման

դպրոց, որը իսկապես կիրականացնի նպատակային վերապատրաստման գործընթացը, ինչպես մի շարք զարգացած հանրային ծառայության համակարգ ունեցող երկրներում: Օրինակ՝ Ֆրանսիայում պետական ծառայողների հավաքագրմամբ զբաղվող կառույցը Ֆրանսիայի Հանրային ծառայության ազգային ինստիտուտն է⁷, որը ապահովում է պետական ծառայողների հավաքագրումը և վերապատրաստման գործընթացը:

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ *յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման*: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ 2018 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով⁸ ամբողջովին վերանայվեց քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ինստիտուտը և սահմանվեց, որ վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա: Այսինքն՝ քաղաքացիական ծառայության համակարգում վերապատրաստումն իրականացնում են քաղաքացիական ծառայողի կարիքի գնահատման հիման վրա, որը կարող է լինել յուրաքանչյուր տարի կամ մի քանի տարին մեկ, կարևորը վերապատրաստումը կիրականացվի քաղաքացիական ծառայողի անհատական կարիքի հիման վրա և այդ կարիքի լուծման նպատակով, մինչդեռ համայնքային ծառայության համակարգում անկախ կարիքի գնահատումից կամ կարիքի առկայությունից համայնքային ծառայողը առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման, ինչը իրավակիրառ պրակտիկայում դրսևորվում է որպես օրենքով սահմանված իրավական նորմի ձևական կողմի ապահովում՝ առանց բովանդակային վերապատրաստում իրականացնելու: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք համայնքային ծառայության համակարգում ևս սահմանել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացի կարգավորումները, որով պայմանավորված՝ առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Համայնքային ծառայողը ենթակա է վերապատրաստման տարեկան կատարողականի գնահատականի արդյունքներով համայնքային ծառայողի անհատական վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա»:

Հաշվի առնելով համայնքային ծառայության համակարգում վերապատրաստման գործընթացի խնդիրները, ինչպես նաև համայնքային ծառայության արդյունավետության բարձրացման և համակարգը որակյալ, ոլորտին տիրապետող ու բարձր որակավորում ունեցող կադրերով համալրելու նպատակով առաջարկում ենք Ռուսաստանի Դաշնության օրինակով (Ռուսաստանի «Համայնքային ծառայության մասին» օրենքի⁹ 28.1-ին հոդված) համայնքային ծառայության համակարգում ներդնել նպատակային վերապատրաստման ինստիտուտ: Այսպես՝ տեղական ինքնակառավարման մարմնի և քաղաքացու միջև կնքվում է նպատակային վերապատրաստման պայմանագիր, որով սահմանվում է, որ քաղաքացու ուսման հետ կապված ծախսերի ֆինանսական աջակցությունն իրականացվում է տեղական բյուջեի միջոցների հաշվին, իսկ քաղաքացին պարտավորվում է համապատասխան ուսումնական ավարտելուց հետո տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված ժամկետում և նշված համայնքում զբաղեցնել համայնքային ծառայության պաշտոն՝ նպատակային վերապատրաստման ընթացքում իր ձեռք բերած գիտելիքները ծառայեցնելով համայնքին: Կարող ենք արձանագրել, որ նպատակային վերապատրաստման արդյունքում համայնքային ծառայությունը համալրվելու է բարձր որակավորում ունեցող և համայնքի առջև ծառացած խնդիրներն ու նպատակները գործնականում իրագործող բանիմաց կադրերով, ինչը կբարձրացնի նաև համայնքային ծառայության գրավչությունը և կնպաստի տարիներ շարունակ թափուր հաստիքների համալրմանը:

Մինչև 2018 թվականի «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների ընդունումը՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքի դրույթները գրեթե ամբողջությամբ կրկնում էին քաղաքացիական ծառայության իրավական կարգավորումները՝ այդպիսով ապահովվելով պետական (քաղաքացիական) ծառայության և համայնքային ծառայության միջև որոշակի միասնականություն և փոխկապակցվածություն: Հանրային ծառայության ոլորտում իրականացրած բարեփոխումների արդյունքում 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին»¹⁰ և «Քաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքներով միջազգային լավագույն փորձի հիման վրա ամբողջությամբ վերանայվեցին, խմբագրվեցին և արդիականացվեցին պետական ծառայությունը կանոնակարգող իրավական կարգավորումները, կառուցակարգերը, ընթացա-

կարգային նորմերը, մինդեռ «Համայնքային ծառայության մասին» օրենքում հանրային ծառայության ոլորտում իրականացրած բարեփոխումներից բխող որևէ օրենսդրական փոփոխություն չկատարվեց՝ դրանով իսկ խաթարելով պետական (քաղաքացիական) ծառայության և համայնքային ծառայության միջև միասնականությունը և փոխկապակցվածությունը: Հաշվի առնելով, որ թե՛ պետական ծառայությունը, թե՛ համայնքային ծառայությունը հանրային ինստիտուտներ են, այսինքն՝ նրանց գործունեությունն ուղղված է հանրային բարիքի հասնելուն, ծառայում են հանրային շահին, այդ իսկ պատճառով չափազանց կարևորում ենք պետական ծառայության և համայնքային ծառայության միասնական բնույթի և առանձնահատկությունների իրավական ապահովման հարցը:

Պետական (քաղաքացիական) ծառայության և համայնքային ծառայության միջև *միասնականությունը և փոխկապակցվածությունը ապահովելու* նպատակով առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» օրենքում կատարել հետևյալ օրենսդրական փոփոխությունները: Այսպես՝

1. Համայնքային ծառայության համակարգի արդիականացման հարցում կարևորագույն խնդիր է համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը: Այսպես՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ, բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ և գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ: Սակայն գտնում ենք, որ համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը 3 խմբերի կարող է առաջացնել ղեկավարման, կառավարման, կազմակերպական, գործառնությունների համակարգման և վերահսկման որոշակի դժվարություններ:

Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ պետական ծառայության տեսակներից ամենամեծ ընդգրկման շրջանակն ունի քաղաքացիական ծառայության համակարգը, որն ունի պաշտոնների գնահատման, դասակարգման, պաշտոնների տեղակայման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանություն: Այսպես՝ 2018 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով ամբողջովին վերանայվեց քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատ-

ման հին համակարգը, սահմանվեց պաշտոնների դասակարգման և գնահատման նոր մեթոդաբանություն, որի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվեցին երկու հիմնական խմբերի՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ և քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ: Ընդ որում, ղեկավար պաշտոնները բաժանվում են հինգ, իսկ մասնագիտական պաշտոնները ութ ենթախմբերի: Հիշյալ մեթոդաբանությամբ սահմանված է նաև, որ քաղաքացիական ծառայության պաշտոնն ընդգրկվում է ղեկավար պաշտոնների խմբում, եթե առկա են աշխատանքների կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառնություններ, ենթակա աշխատողներ, իսկ այս պահանջների բացակայության դեպքում պաշտոնն ընդգրկվում է մասնագիտական պաշտոնների խմբում:

Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման համակարգը արդիականացնելու, հանրային ծառայության ոլորտում իրականացրած բարեփոխումներին համապատասխանեցնելու, ինչպես նաև պետական (քաղաքացիական) ծառայության և համայնքային ծառայության միջև միասնականությունը և փոխկապակցվածությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք համայնքային ծառայության պաշտոնները նույնպես դասակարգել երկու խմբերի՝ համայնքային ծառայության ղեկավար պաշտոններ և համայնքային ծառայության մասնագիտական պաշտոններ: Այս կապակցությամբ առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝

1) համայնքային ծառայության ղեկավար պաշտոններ:

2) համայնքային ծառայության մասնագիտական պաշտոններ:

3. Համայնքային ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթախմբերի: Համայնքային ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի:

Համայնքային ծառայության ղեկավար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում ընդգրկվում է 15 հազար և ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը, 2-րդ ենթախմբում ընդգրկվում է մինչև 15 հազար բնակչու-

թյուն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը, 3-րդ ենթախմբում ընդգրկվում է կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը, իսկ 4-րդ ենթախմբում ընդգրկվում է կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքում ներառված ներքին միավորի ղեկավարի պաշտոնը:

Համայնքային ծառայության մասնագիտական պաշտոնների խմբի 1-ին և 2-րդ ենթախմբերում ընդգրկվում են գլխավոր մասնագետների պաշտոնները, 3-րդ և 4-րդ ենթախմբերում ընդգրկվում են առաջատար մասնագետների պաշտոնները, իսկ 5-րդ ենթախմբում ընդգրկվում են կրտսեր պաշտոնները:»:

Հարկ է նշել նաև, որ թեև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի պաշտոնները դասակարգվում են 1-5-րդ ենթախմբերի, իսկ մասնագիտական խմբի պաշտոնները՝ 1-8-րդ ենթախմբերի, այնուամենայնիվ, ղեկավար խմբի 5-րդ ենթախմբում, մասնագիտական խմբի 5-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերում գործնականում որևէ պաշտոն ընդգրկված չէ, այդ իսկ պատճառով համայնքային ծառայության պաշտոնները դասակարգելիս բացառել ենք հիշյալ ենթախմբերը:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ 2020 թվականի հունվարի 21-ին Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 65 օրենքների փաթեթով պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան պաշտոններին ներկայացվող աշխատանքային ստաժի չափանիշները փոփոխվել են, որի արդյունքում պետական ծառայություններում աշխատանքի ընդունվելը դարձել է ավելի դյուրին, քանի որ իջեցվել է տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող հանրային ծառայության կամ մասնագիտական աշխատանքային ստաժի չափանիշները: Մասնավորապես՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի պաշտոնների (համարժեք է համայնքային ծառայության առաջատար խմբի պաշտոններին) համար պահանջվում է հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ, մինչդեռ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության առաջատար պաշտոնների համար պահանջվում է համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշ-

տոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության *առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ*:

Պետք է արձանագրել, որ ներկայումս համայնքային ծառայությունը կանգնած է արհեստավարժ կադրերով համալրվելու խնդրի առջև, հետևաբար համայնքային ծառայության համակարգում միասնական պահանջների սահմանումը և կիրառումը առաջին հերթին կնպաստի համայնքային ծառայության ոլորտում մարդկային ռեսուրսների ապահովման քաղաքականության բարելավմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև համայնքային ծառայությունը երիտասարդների համար ավելի գրավիչ և առավել մրցակցային դարձնելու համար առաջարկում ենք իջեցնել համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնելու համար օրենքով սահմանված աշխատանքային ստաժի չափանիշները:

2. «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայողներին շնորհվում են իրենց զբաղեցրած պաշտոններին համապատասխանող դասային աստիճաններ: 2018 թվականին ընդունված «Զաղաքացիական ծառայության մասին» օրենքով քաղաքացիական ծառայողներին դասային աստիճաններ շնորհելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ նախատեսված չեն, այսինքն՝ քաղաքացիական ծառայողներին այլևս դասային աստիճաններ չեն շնորհվում, միայն քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, որպես խրախուսանք, Հանրապետության Նախագահը կարող է շնորհել բարձրագույն դասային աստիճաններ: Հարկ է նշել, որ քաղաքացիական ծառայության համակարգից դասային աստիճանները հանվել են այն հիմնավորմամբ, որ քաղաքացիական ծառայության բոլոր թափուր պաշտոնները, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխան, զբաղեցվում են բացառապես մրցութային կարգով, իսկ մրցութի միջոցով ստուգվում և գնահատվում է մրցութի մասնակցի՝ տվյալ թափուր պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրա-

պետման մակարդակը, հետևաբար դասային աստիճաններ շնորհելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ դասային աստիճանը համարվում էր քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշ:

Հաշվի առնելով, որ համայնքային ծառայության համակարգում դասային աստիճանը նույնպես բնութագրում է համայնքային ծառայողի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորումը, ինչպես նաև նախորդ ենթագլխում արտամրցութային կարգը ներքին մրցութով փոխարինելու վերաբերյալ առաջարկությունը, որով փաստացի ստացվում է, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները նույնպես զբաղեցվելու են բացառապես մրցութային կարգով, առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել՝ միաժամանակ սահմանելով, որ համայնքային ծառայողներին նախկինում շնորհված դասային աստիճանները պահպանվում են:

3. «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված է համայնքային ծառայողների ատեստավորումը՝ որպես համայնքային ծառայողների աշխատանքի գնահատման մեթոդ: Համայնքային ծառայողների ատեստավորման վերաբերյալ օրենսդրական նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ատեստավորման գործընթացում հիմնական թերություններից են համայնքային ծառայողի կողմից կատարած աշխատանքի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կամ ոչ լիարժեքությունը, ատեստավորման գործընթացի ոչ թափանցիկությունը, որոշումների սուբյեկտիվությունը, որոշումների կայացման հիմքում սահմանված չափանիշների բացակայությունը, ատեստավորման արդյունքների բողոքարկման ոչ հստակ կառուցակարգերի կիրառումը: Հարկ է նշել, որ դեռևս 2017 թվականի հունվարի 1-ից քաղաքացիական ծառայության համակարգում դադարեցվել է պարտադիր ատեստավորման գործընթացը, և քաղաքացիական ծառայողի ատեստավորման ինստիտուտը փոխարինվել է քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման համակարգով, որը իրականացվում է աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման արդյունքներով: Ավելին՝ 2018 թվականի բարեփոխումների արդյունքում պետական ծառայության մի շարք տեսակներից հանվեց ատեստավորումը և

ներկայումս ատեստավորման գործընթացը պահպանվել է միայն դիվանագիտական, քրեակատարողական, փրկարար և հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություններում:

Հոգեբանական տեսանկյունից ատեստավորումը դիտվում է որպես քննություն, քանի որ ատեստավորմանը հարմարվելու համար անձից պահանջվում են թե՛ հոգեբանական, թե՛ մտավոր լրացուցիչ ջանքեր: Երբեմն անձի հոգեբանական ռեսուրսները թույլ են տալիս իրավիճակն ընդունել որպես բնականոն գործընթաց և դրան վերաբերվել առանց հուզական ապրումների, սակայն բազմաթիվ են այն դեպքերը, երբ անձը, ունենալով ատեստավորման համար անհրաժեշտ գիտելիքներ, բայց սակավ հոգեբանական ռեսուրսներ, չի կարողանում հաղթահարել այդ փուլը¹¹:

Վերոգրյալի հաշվառմամբ պարզ է դառնում, որ ատեստավորման գործընթացն այն արդյունավետ գործիքը չէ, որով հնարավոր է որոշել զբաղեցրած պաշտոնին համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը: Այս առումով գտնում ենք, որ համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնին մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության հարցը հնարավոր կլինի գնահատել միայն յուրաքանչյուր ծառայողի կատարած աշխատանքի արդյունքի անհատական գնահատման համակարգի ներդրմամբ, որով ամենօրյա ռեժիմով անմիջական ղեկավարի կողմից կգնահատվի համայնքային ծառայողի կատարած

աշխատանքի արդյունքներն ու որակը, ինչպես նախատեսված է պետական ծառայության բոլոր տեսակներում: Այդ նպատակով առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածը և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերը և համայնքային ծառայության համակարգում քաղաքացիական ծառայության օրինակով ներդնել համայնքային ծառայողների կատարողականի գնահատման համակարգ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ ներկայումս համայնքային ծառայության համակարգում կարևորագույն հիմնախնդիրներ են համայնքային ծառայության օրենսդրության արդիականացումն ու կատարելագործումը, օրենսդրության մեջ առկա հակասությունների և բացթողումների վերհանումը և դրանց իրավական լուծումներ տալը, ինչպես նաև պետական ծառայության և համայնքային ծառայության միջև փոխկապակցվածությունը ապահովող միասնական մոդերի և կառուցակարգերի սահմանումը: Հաշվի առնելով, որ համայնքային ծառայության արդյունավետությունը մեծապես կախված է վերը նշված հիմնախնդիրների լուծումից, գտնում ենք, որ համայնքային ծառայության զարգացումն և արդիականացումը պետք է ուղղված լինի հիշյալ հիմնախնդիրների հաղթահարմանը և օրենսդրական եղանակով իրավական լուծմանը:

¹ Տե՛ս, ՀՀՊՏ 2005.01.26/7(379)

² Концепция М. Вебера - В. Вильсона (studik.net), մուտք 20.08.2022թ.:

³ Տե՛ս, Մ. Մակինյան, Համայնքային ծառայության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Երևան, 2011, էջ 90:

⁴ Տե՛ս, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում

⁵ Տե՛ս, ՀՀԳ Տ 1993/8

⁶ Տե՛ս, Нерознак В.П., Государственные языки в Российской Федерации, Энциклопедический словарь-справочник, М., 1995, С 10.

⁷ Ecole Nationale d'Administration (ENA), մուտք 01.07.2022թ.:

⁸ Տե՛ս, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382)

⁹ Տե՛ս, Федеральный закон о муниципальной службе в Российской Федерации, 02.03.2007 г., N 25-ФЗ.

¹⁰ Տե՛ս, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382)

¹¹ Տե՛ս, Ա. Լոքյան, Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, Պետական կառավարման ակադեմիա, 2015, էջ 130:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Համայնքային ծառայության մասին» օրենք, ընդունված 14.12.2005թ.:
2. Концепция М. Вебера - В. Вильсона (studik.net), մուտք 20.08.2022թ.:
3. Մսկինյան Մ., Համայնքային ծառայության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Երևան, 2011:
4. Սահմանադրություն, 06.12.2015 թ. փոփոխություններով:
5. «Լեզվի մասին» օրենք, ընդունված 30.03.1993թ.:
6. Нерознак В. П., Государственные языки в Российской Федерации, Энциклопедический словарь-справочник, Москва. Academia, 1995.
7. Ecole Nationale d'Administration (ENA), մուտք 01.07.2022թ.:
8. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, ընդունված 23.03.2018թ.:
9. Федеральный закон о муниципальной службе в Российской Федерации, 02.03.2007 г., N 25-ФЗ.
10. «Հանրային ծառայության մասին» օրենք, ընդունված 23.03.2018թ.:
11. Լոքյան Ա., Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, Պետական կառավարման ակադեմիա, 2015:

Անուշ Մովսիսյան

Главный юрист организационно-правового департамента
офиса гражданской службы аппарата премьер-министра
Соискатель института философии,
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

*Актуальные вопросы муниципальной службы
и их юридические решения*

Статья посвящена освещению существующих законодательных проблем в сфере муниципальных служб, которые считаются отдельным видом государственной службы, и их всестороннему изучению. В частности, в статье были представлены проблемные законодательные вопросы в сфере муниципальных служб, в свете которых сделаны выводы и представлены соответствующие законодательные предложения и правовые решения с целью упорядочить и сделать сферу муниципальных служб более полной.

Ключевые слова: муниципальная служба, муниципальная должность, повышение квалификации, ранг класса, аттестация.

Anush Movsisyan

Chief Lawyer of the Organizational and Legal Department
of the Civil Service Office of Staff of the Prime Minister
Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS of RA

SUMMARY

Topical issues of municipal service and their legal solutions

The article is devoted to highlighting the existing legislative problems in the field of municipal services, which are considered a separate type of public service, and their comprehensive study. In particular, the article presented problematic legislative issues in the field of municipal services, in the light of which conclusions were drawn and relevant legislative proposals and legal solutions were presented in order to streamline and make the sphere of municipal services more complete.

Key words: municipal service, municipal position, advanced training, class rank, attestation.

Բնագիրը ներկայացվել է 25.09.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Մանուկյանը

НАРИНЕ АБЕЛЯН

Юрист медицинского центра “Эребуни”,
аспирантка 2-ого года обучения института права
и политики Российско-Армянского
(Славянского) университета

ПРАВО ЧЕЛОВЕЧЕСКОГО ЭМБРИОНА НА РОЖДЕНИЕ В СВЕТЕ РЕПРОДУКТИВНЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА

В данной статье представлены теоретические взгляды на момент начала жизни человека, а также сравнения между правом на рождение человеческого эмбриона и репродуктивными правами человека, например, аборт. В статье также представлено правовое регулирование ряда зарубежных стран, касаемо начала жизни человека и правового статуса человеческого эмбриона.

Ключевые слова: эмбрион человека, репродуктивные права, искусственное прерывание беременности, аборт.

С точки зрения современной биологии, а именно генетики и эмбриологии, жизнь человека начинается с самого момента слияния ядер мужских и женских половых клеток и образованием единого ядра, содержащего неповторимый генетический материал. И, несмотря на такую научную формулировку, в правовом смысле, эмбрион, согласно законодательству Республики Армения, все еще не имеет какого-либо правового статуса, а начало его жизни связывается с моментом отделения плаценты от тела матери. Наше законодательство не регулирует таких важных с юридической точки зрения вопросов, как правовой статус человеческого эмбриона, что негативно отражается на все законодательство, регулирующее репродуктивные права человека. Обуславливание правовой защиты и дача правового статуса человеку только после его рождения, думаем, некорректна как с моральной, так и юридической точки зрения. Во-первых неясно по какому критерию нужно решать момент начала жизни, а также неясно - как можно связывать ценность человеческой жизни лишь местом нахождения (вне женского организма и в женском организме) т.к. в конечном счете - это один и тот же человек. Кроме того, остро стоит вопрос соотношения репродуктивных прав с правовым статусом человеческого эмбриона, ведь в случае придачи человеческому эмбриону правовой защиты, некоторые репродуктивные права (например: право на искусственное прерывание беременности) будут ограничены.

В любом цивилизованном обществе жизнь человека - высшая ценность, но не во всех охраняется **право на рождение**, что, по нашему

мнению, противоречит духу закона.

В работе представлены основные пути решения вышеизложенных проблем, основываясь на опыте ряда государств, которые имеют более прогрессивное законодательное регулирование.

Актуальность выбранной темы обуславливается пробелами в законодательном регулировании статуса человеческого эмбриона и определением момента начала человеческой жизни.

Целью данной работы является выявление основных проблем, связанных с отсутствием правовой защиты эмбрионов, обзор практики ряда стран по вопросу правовой защищенности человеческого эмбриона, соотношения правовой защиты человеческой жизни до рождения с репродуктивными правами человека, предложение путей решения вышеизложенных проблем, посредством внесения соответствующих поправок в законодательство РА.

Задачами являются представление разных подходов к определению момента начала человеческой жизни, изучение международной практики по данной проблематике, представление этапов формирования плода, изучение ряда нормативных документов, регулирующих вопрос правового статуса эмбриона и вопроса начала жизни человека и их соотношения с репродуктивными правами человека.

Право на жизнь охраняется Конституциями большинства государств мира и в том числе Конституцией Республики Армения. Однако, законодатель не поясняет с какого момента начинается человеческая жизнь, с какого момента она представляет правовую ценность и подлежит защите.

На законодательном уровне не регулируется вопрос о моменте начала жизни, а также не предусмотрены специальные нормы, которые бы непосредственно защищали жизнь плода (зародыша) в процессе его внутриутробного развития и во время родов. В теории же даются разные подходы к регулированию вопроса, связанного с началом жизни человека, и, следовательно, с моментом его становления объектом правовой защиты. Этот вопрос имеет очень важное значение для квалификации тех или иных действий, связанных с посягательством на жизнь или здоровье плода, а так же возможного ограничения репродуктивных прав человека.

Права, связанные с осуществлением репродуктивной деятельности человека, были признаны в решениях ООН еще в 1968 году. Сама же концепция репродуктивных прав, а в частности права на репродуктивный выбор были сформулированы на Международной конференции по правам человека (Тегеран, 23 мая 1968 года). В 16-ом пункте Воззвания Тегеранской конференции было определено неотъемлемое право родителей свободно и с чувством ответственности определять число детей и сроки их рождения¹.

Дальнейшее развитие репродуктивных прав имело место в итоговых документах трех международных конференций по народонаселению и развитию (Бухарест, 1974; Мехико, 1985; Каир, 1995), а также Всемирной конференции по положению женщин (Пекин, 1995)².

Таким образом концепция репродуктивных прав получила статус самостоятельных прав. В теории репродуктивные права называют также правами 4-ого поколения, в связи с тем, что они предусматривают новые, самостоятельные права человека.

К репродуктивным правам человека относятся такие права как: право на планирование семьи, право на искусственное оплодотворение, право на искусственное прерывание беременности, право на получение достоверной информации о репродуктивном здоровье, право супружеских пар и отдельных лиц на достижение максимально высокого уровня репродуктивного здоровья, право свободно и ответственно принимать решения в отношении воспроизводства потомства без какой-либо дискриминации, принуждения и насилия, располагать для этого необходимой информацией и иметь доступ к наиболее эффективным и безопасным методам планирования семьи и методам преодоления бесплодия.

Автор также придерживается той точки зрения, что права, связанные с репродуктивным здоровьем, ввиду продолжаемых достижений медицины и медицинских технологий, нуждаются в самостоятельной регламентации. Наиболее остро стоит вопрос соотношения репродуктивных прав уже рожденного человека с правами нерожденных. Ввиду того, что законодательство не предусматривает какой-либо защиты для нерожденных (человеческого эмбриона), можно отметить, что для государства приоритетным становится защита репродуктивных прав человека.

В данной статье репродуктивные права человека сопоставляются с таким правом человека как право на жизнь.

Взаимосвязь права на жизнь с репродуктивными правами очевидна при рассмотрении правового режима искусственного прерывания беременности, при определении момента возникновения жизни, при определении правового статуса эмбриона. Так, не утихают споры, связанные с определением начала жизни: на какой стадии своего развития плод становится жизнеспособным, т.е. имеет возможность осуществлять основные жизненные функции самостоятельно? Какой именно момент брать за основу - момент зачатия, момент формирования организма, момент начала работы мозга или начала работы сердца? Нерешенными также являются проблемы, связанные с правомерностью замораживания эмбрионов, сроки их хранения и использование их для реципиентов, права и обязанности доноров и т.д.

Мнения авторов можно классифицировать на следующие группы: *сторонники абсолютной, умеренной и либеральной теорий*.

Сторонники *абсолютной* теории (Е. Велти, В. А. Голиченко, Л. Н. Линик, И. В. Чиндин) считали, что жизнь начинается с момента оплодотворения и с того же момента, следовательно, должно охраняться право плода на жизнь. Именно поэтому запрещаются любые действия, нарушающие его нормальное развитие. Согласно этой теории государство должно охранять право на жизнь эмбриона на любом этапе его развития.

Сторонниками *умеренной (градуалистической)* позиции, считают, что «оплодотворенная яйцеклетка развивается в человеческое существо постепенно и эмбрион имеет значительную, но не абсолютную ценность»³.

В рамках данной позиции эмбрион имеет право на жизнь, по мнению одних авторов, при достижении

определенного уровня развития (Б. Херинг, М. Д. Байлес), по мнению других - при достижении жизнеспособности (М. Энгельхарт). Однако единого мнения у последователей данной теории нет.

Сторонники *либеральной* позиции основывают свои доводы на положении, согласно которому человеческий эмбрион имеет *незначительную* ценность или даже лишен ее, поэтому не нуждается в какой-то особой защите и не наделяется правом на жизнь. Данную позицию разделяет, например, В. С. Репин: «Любое решение в новой области не может приниматься исключительно по биоэтическим (от др.-греч. βίος - жизнь и ἦθικῇ - поведение, поступки - учение о нравственной стороне деятельности человека в медицине и биологии) или моральным соображениям... Сторонники идеологии «про-лайф» (или движение «в защиту жизни») уравнивают качество жизни прародительских клеток и людей. Это равносильно знаку равенства между биологическим потенциалом плодовых косточек и дерева»⁴.

Некоторые авторы считают, что эмбрион имеет право на жизнь, начиная с 14-ого дня своего развития, так как до этого периода он состоит из нескольких слоев клеток, которые в дальнейшем не участвуют в его формировании⁵.

Так, Конституция Республики Армения гарантирует право на жизнь. Однако, фактически наше законодательство не предусматривает определенных сроков, касаемо момента начала жизни, и, соответственно, не регулирует вопрос о том, когда начинается человеческая жизнь и с какого момента она подлежит правовой защите.

В ряде стран существуют различные правовые режимы по защите жизни до рождения:

- Закрепление конституционного права на жизнь до рождения, как предусмотрено национальными конституциями Гватемалы и Чили.
- Конституционные нормы, предоставляющие равную защиту права на жизнь как беременной женщине, так и «неродившемуся ребенку», как предусматривают конституции Ирландии и Филиппин.
- Законодательство, закрепляющее защиту права на жизнь до рождения, как в Польше.

Борьба за признание права на жизнь до рождения зародилась в контексте разработки конституционных реформ и законодательных инициатив, а также рассмотрения судебных споров, направленных на распространение конституционных гарантий защиты права на жизнь на период до

рождения.

Так, в 2010 г. в Доминиканской Республике была принята новая конституция, которая признала право на жизнь с момента зачатия. В 2008 г. и 2010 г. в американском штате Колорадо, а в 2011 г. - в штате Миссисипи были отклонены инициативы по внесению изменений в конституции данных штатов, направленные на признание того, что «жизнь начинается с момента зачатия» и что с момента оплодотворения яйцеклетка, эмбрион и плод являются людьми со всеми правами, гарантированными гражданам по конституциям штатов. С 2008 г. не менее чем в 16 мексиканских штатах были внесены изменения в конституции, предусматривающие защиту права на жизнь с момента оплодотворения либо с момента зачатия. Члены парламента Словакии обжаловали конституционность закона об абортгах, ссылаясь на то, что конституция защищает право на жизнь до рождения. Однако в 2007 году Конституционный Суд Словакии постановил, что предоставление плоду права на жизнь напрямую противоречит конституционным правам женщин на здоровье и неприкосновенность частной жизни⁶, и подтвердил конституционность закона об абортгах⁶.

Считаем, что постановление суда не слишком абсолютизировано и не дает возможности сбалансированному подходу к данному вопросу.

Таким образом, образуется ситуация, в которой сопоставляются два основных права и в каком-то смысле эти права взаимосвязаны. Для Автора остается безответным вопрос о том по каким правовым или моральным соображениям, к примеру, надругательство над трупом формирует состав преступления, а прерывание беременности на 7-ой неделе развития эмбриона - нет.

Мнение Автора сводится к тому, что именно с момента оплодотворения начинается развиваться человеческая жизнь и каждый этап его формирования должен подлежать правовой охране и защите.

¹ Сборник международных договоров. ООН: Нью-Йорк. 1978. С. 22- 23.

² Ю.В. Крейнина. Состояние репродуктивного здоровья женщин РФ на современном этапе. В: Репродуктивные права граждан в России: реальность и ожидания. Материалы межрегионального семинара. М.1996. С.13-14.

³ The Protection of the Human Embryo in vitro: report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus [Electronic resource] // Council of Europe.

⁴ В. С. Репин. Новые биотехнологические реальности в медицине XXI века: место и роль биоэтики // Медицина и право: материалы конф. Москва, февраль 1999 г. М.: Междунар. акад. предпринимательства, 1999. С. 81—101.

⁵ Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus

6. https://www.reproductiverights.org/sites/crr.civicactions.net/files/documents/RTL_RU_7%2011%202016_FINAL.pdf

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Protection of the Human Embryo in vitro: report by Working Party.
2. Protection of the Human Embryo and Fetus [Electronic resource] // Council of Europe.
3. Arakelyan, Nelly, Contemporary Challenges in Protection of Human Dignity of a Human Embryo (October 1, 2017). Charles University in Prague Faculty of Law Research Paper No. 2017/III/3.
4. Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus Electronic Law Journal, Vol. 14, No. 5, 2011)
5. John I. Fleming, Michael G. Hains, «The right to life of the unborn and international law», Australian Bar Review, Vol. 16(2), December 1997)
6. Майкл Сэндел "Справедливость: как поступать правильно" ISBN: 978-5-91657-814-0С.56-68.
7. The Protection of the Human Embryo in vitro: report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus [Electronic resource] // Council of Europe
8. В. С. Репин. Новые биотехнологические реальности в медицине XXI века: место и роль биоэтики // Медицина и право: материалы конф. Москва, февраль 1999 г. М.: Междунар. акад. предпринимательства, 1999.
9. Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus
10. Сборник международных договоров. ООН: Нью-Йорк. 1978.
11. Ю.В. Крейнина. Состояние репродуктивного здоровья женщин РФ на современном этапе. В: Репродуктивные права граждан в России: реальность и ожидания. Материалы межрегионального семинара. М.1996.

Նարինե Արեյան

«Էրեբունի» բժշկական կենտրոնի իրավաբան
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի 2-րդ կուրսի ասպիրանտ

ԱՄՓՈՓՈՒՄ

*Մարդկային էմբրիոնի ծնվելու իրավունքը մարդու
սահմանադրական իրավունքների լույսի ներքո*

Սույն հոդվածում ներկայացված են մարդկային կյանքի սկզբի վերաբերյալ տեսակետերը, ինչպես նաև մարդկային էմբրիոնի՝ ծնվելու և անձի վերադարձնողական, օրինակ՝ հղիության արդեստական ընդհատման /աբորտ/ համեմատականները: Հոդվածում ներկայացված է նաև մարդու կյանքի սկզբի և մարդկային էմբրիոնի իրավական կարգավիճակի վերաբերյալ արտասահմանյան երկրների իրավական կարգավորումները:

Հիմնաբառեր - մարդկային էմբրիոն, վերադարձնողական իրավունքներ, հղիության արհեստական ընդհատում, աբորտ:

Narine Abelyan

Lawyer in medical centre «Erebuni»

PhD student of the 2nd year of study at the Russian-Armenian
Slavonic University of the Institute of Law and Politics

SUMMARY

Human embryo's right to be born in the light of man's reproductive rights

This article presents views on the moment of the beginning of human life, as well as comparisons between the right to the birth of a human embryo and human reproductive rights, for example, abortion. The article also presents the legal regulation in a number of foreign countries regarding the beginning of human life and the legal status of the human embryo.

Key words: *Human embryo, reproductive rights, artificial termination of pregnancy, abortion.*

Բնագիրը ներկայացվել է 02.12.2022թ.

Ընդունվել է տպագրության 07.12.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գամբարյանը